№ 104 ԿԻՐԱԿԻ, 16 ՄԱՅԻՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 16 ՄԱՅԻՍԻ № 104

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253

ՄՇԱԿ

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով):

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Այսօր, կիրակի, մայիսի 16-ին

Անդրէաս Արզումանեան ԹԻՒՆԻԲԷԿԵԱՆՑԻ

մահվան քառասունօրեակին Վանքի մայր-եկեղեցում տեղի կունենայ պատարագ և ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ, որի մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի այրին՝ Սօֆիա Աւագեան և եղբայրը՝ Իսայ Արզումանեան ԹԻՒՆԻԲԷԿԵԱՆՑՆԵՐԸ: Պատարագի սկիզբը առ. ժ. $10\frac{1}{2}$-ին, իսկ հոգեհանգիստը ժ. 12-ին:

550. 2—2

Կիրակի, մայիսի 16-ին

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՅԳՈՒՄ

Յօգուտ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան
տեղի կունենայ

ՎԵՐՋԻՆ ՄԱՅԻՍԵԱՆ ԶԲՕՍԱՆՔ

հետեւեալ ծրագրով.

Կօստին Դօնսկոյի սէանսները—յատկապէս երեխաների համար: Խօսող և երգող ֆիգուրաներ (աւտոմատ): Մանկական խաղեր: Մեծերի համար.—Կենդանի պօրտրէտներ, իմիտացիա և պօրօդիաներ:

Նորին Կայս. Մեծութեան Փոխարքայի Թիկնապահ կօզակների երգեցիկ խումբը: Երևանեան սազանդարներ: Երկու զինուորական-երաժշտական խումբ: Սերպանտիններով կօնֆէտներ: Ձիարշաւ: Տոմբօլա: Բուֆէտ և պարեր:

Սկիզբն է ցերեկվայ ժամը 3-ին:

Մուտքը մեծերի համար 30 կ., երեխաների և տարազով աշակերտների համար 20 կ.:

(Հ. Կ.) (առ.) 530. 3—3

Սարուխանօվ-Կուրինսկի Ակցիօներական Ընկերութեան Վարչութիւնը

ՁԵՌՆԱՐԿԵԼՈՎ ՇՈՒՇՈՒ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ

սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ սոյն 1910 թւի մայիսի 5-ից սկսած վաճառվում են ակցիաները հետևեալ պայմաններով.

1) Իւրաքանչիւր ակցիայի իսկական գինը 50 րուբլի է:

2) Ստորագրվելիս ընդունվում է իսկական գնի 20% վճարը, իսկ մնացած 80%-ը իւրաքանչիւր 1 ամսից յետոյ 10-ական տոկոսով: Մտցրած գումարի համար տրվում է ժամանակաւոր անդորրագիր, որը՝ ամբողջ գումարն ընդունելուց յետոյ՝ փոխարինվում է ժամանակաւոր վկայականներով:

3) Ակցիաների ստորագրութիւններ ու վճարներ ընդունվում են.

Պետերբուրգ՝ Մեժդունարօդնի բանկում:
Մոսկվա՝ նոյն բանկի բաժանմունքում:
Բագու՝ նոյն բանկի բաժանմունքում:
Բալախանի՝ նոյն բանկի բաժանմունքում:
Թիֆլիս՝ Ազովսկօ-Դօնսկի բանկում:
Ելիսաւետպօլ՝ նոյն բանկի բաժանմունքում:
Շուշի՝ Փոխադարձ Վարկում (Վզայիմնի Կրեդիտում):
Նուխի՝ Թիֆլիսի Առևտր. բանկի բաժանմունքում:
Նուխի՝ Տեղական Փոխադարձ Վարկում (Վզայիմնի Կրեդիտ):
Ասխաբադ՝ Ռուսսկօ-Կիտայսկի բանկում:
Կօկանդ՝ նոյն բանկի բաժանմունքում:
Սամարղանդ՝ նոյն բանկի բաժանմունքում:
Վլադիկավկազ՝ Տեղական Փոխադարձ Վարկում (Վզայիմնի Կրեդիտ):

4) Ստորագրութիւնը կը շարունակվի երկու ամիս՝ սկսած մայիսի 5-ից, որից յետոյ կը դադարեցվի: 200-ից աւել ակցիա ուզողներին բաւարարութիւն կը տրվի վարչութիւնից ստորագրութիւնների ընդհատումից յետոյ, եթէ միայն բոլոր ակցիաները բաժանված չը լինեն:

5) Ստորագրութիւնն ընդունվում է ժամը 10-ից մինչև 2-ը ցերեկվայ:

6) Ընկերութեան կանոնադրութիւնը Բարձրագոյնս հաստատված է 1909 թւի յունվարի 23-ին:

7) Երկաթուղու գործի հետ ծանօթանալ և առհասարակ որևէ տեղեկութիւն իմանալ ցանկացողները կարող են դիմել անձամբ կամ գրաւոր Սարուխանօվ-Կուրինսկի Ակցիօներական Ընկերութեան գրասենեակը՝ Բագու, Մօլօկանսկայա փողոց, տուն Սպադօվսկու № 17, ամէն օր՝ ցերեկվայ ժամը 10-ից մինչև 2-ը, բացի տօն օրերից:

Վարչութեան դիրեկտորներ՝
Դ. Ս. Ս. Հ.-Զ.-Ա. Թաղիեվ
Ս. Ի. Բիլսկի
Դ. Բ. Աւան-Իւզբաշեան

Դիրեկտոր-Կարգադրիչ՝ Մ. Մ. Սարուխանեան

(Հ. Կ.) (ա) 511. 5—4

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ և ԿՕՄ." ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Պետերբուրգի „ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ" ռուսական էլէկտրօ-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բերլինի „ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ" ակց. ընկ., Բերլինի „ՍԻՄԷՆՍ ՇՈՒԿԵՐՏ-ՎԵՐԿԷ" ակց. ընկ., Կօլոմնի մեքենագործական ընկ. և եղբ. „ԿՐՕՍԼԷՅ" անգլիական գործարանի ներկայացուցիչներ:

ՉԱՓՍԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — ՀՕՍԱՆՔԱՉԱՓ, ամպէրմէտրներ, վօլտմէտրներ և ամէն տեսակ հաշւեցոյց ապարատներ փոփոխվող և մշտական հոսանքի համար:

ԷԼԵԿՏՐՕ-ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — „ՌԷՆՏԳԷՆԻ" ապարատներ բոլոր պատկանելիքներով: Միւս բոլոր ապարատները՝ ԿԱՈՒՍՏԻԿԻ, ԳԱԼՎԱՆԻԶԱՑԻԱՅԻ, ԷԼԵԿՏՐՕԼԻԶԻ, ֆարադիզացիայի համար, և այլն:

ԱՎՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Ավտոմօբիլներ «ՊՐՕՏՕՍ», էլէկտրաշարժ և բենզինաշարժ: „Մօտօրնի մակոյկներ": Ավտոմօբիլային պատկանելիքներ:

ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Ջերմային շարժիչներ „ԴԻԶԷԼԻ" - հում նաւթի, մազութի համար և այլն, միանգամայն ձեռնտու: Գազային շարժիչներ «ԳԻՒԼԴՆԷՐԻ»: Նաւթային, կէրօսինային, գազային շարժիչներ „ԿՐՕՍԼԷՅԻ":

ՊԱՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամօ-մեքենաներ, էլէկտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլէկտրական կառուցուածքների համար և այլն:

ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման:

Տելեֆօն № 533. Հասցէն հեռագրերի համար՝ Шукертъ, Тифлисъ.

№ 2. (Կ.) (առ.) 433. 26—3

ԱԶԴ

ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿԻՑ ՅԵՏՈՅ ԲԱՑՎՈՒՄ Է

ԱՅԳԻ և ԲՈՒՖԷՏ

„ՄՈՒՋԱ" ԹԱՏՐՈՆԻՆ ԿԻՑ

Միխայլովսկի պրօսպէկտ, № 143.

ԲԱՑՄԱՆ ՕՐՎԱՅ ՄԱՍԻՆ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐՎԻ ԱՌԱՆՁԻՆ:

(առ.) 560. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ձեռնարկելով Թիֆլիսի բոլոր անշարժ կայքերի ընդհանուր վերագնահատութեան գործին, Քաղաքային Վարչութիւնը՝ կամենալով այդ կայքերի տէրերին կարելիութիւն տուած լինել անձամբ կամ իրանց հաւատարմատարների միջոցով ներկայ գտնվելու կայքի գնահատութեան գործողութիւնների ժամանակ, խնդրում է անշարժ կայքերի բոլոր այն տէրերին, որոնք հեռու են բնակվում գնահատութեան ենթարկվող իրանց կայքերից, շտապեն վաղօրօք յայտնել Վերագնահատող Գործադիր Յանձնաժողովին (Ուպրավա, ֆինանսական բաժանմունք) իրանց ճիշդ հասցէն, որով կուղարկվեն նրանց ծանուցագիր գնահատութեան օրվայ և այլ տեղեկութիւնների մասին, որոնք կը վերաբերվեն ամբողջ գործողութեանը:

(Հ. Կ.) (առ.) 544. 2—2

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

Զուբալովեան անուան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ

Կիրակի, մայիսի 16-ին

Հայոց Դրամատիկական Ընկերութեան Թատերասէրների խումբը

Մասնակցութեամբ դերասանների

կը ներկայացնէ

Մարկ Տուէնի մահվան յիշատակին

ԻՆՉՊԷՍ ԴԱՐՁԱՒ ՆԱ ԽՄԲԱԳԻՐ

Կօմէդիա 2 գ., Մարկ Տուէնի, թարգմ. Գ. Միրաղեանի

Առաջին անգամ

ԱԼԻՔ

Կօմէդիա 2 գործ., հեղ. Յար. Թումանեանի

ՋԱՒԵՇՏ

Սկիզբն է $8\frac{1}{2}$ ժամին երեկոյեան:

Տեղերի գները 5-ից մինչև 50 կոպ.:

Րէժիսեօր՝ Սևումեան

(ա.) 553. 1—1

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ՌՈՒՍԱՑ ԴՐԱՄԱ—դիրեկցիա Ն. Դ. ԿՐՈՒՉԻՆԻՆԻ և Մ. Ն. ՄԱՐՏՕՎԻ

Ուրբաթ, մայիսի 21-ին

ՅՕԳՈՒՏ «ԿՕՊԷԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

կը ներկայացվեն

I. Въ оградѣ

3 գործ. պատկ. ընտանեկան կեանքից, հեղ. Ս. Չանտուրեվիլի:

II. ЮБИЛЕЙ

Վօդեվիլ 1 գործ., հեղ. Ա. Պ. Չէխօվի:

Մասնակցում է ամբողջ խումբը:

Գլխ. ռէժիսեօր՝ Մ. Ն. ՄԱՐՏՕՎ

Տոմսակները ծախվում են: Տեղերի գները դրամատիկական են:

555. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(Անկիւն Իզմայլօվսկայա և Օվեսապօլկ-Միրսկայա փողոցների, № 1, ապաստարան Օղնօսումօվի)

Կազմակերպելով, մայրաքաղաքի բարեգործական հաստատութիւնների օրինակով,

ԱՄԷՆ ՄԻ ՏԱՆ ԱՒԵԼՈՐԴ ԻՐԵՐԻ ԺՈՂՈՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ,

դիմում է քաղաքի ազգաբնակութեանը խընդրելով նուիրել զանազան հին զգեստներ, ինչպէս օրինակ՝ հին կրկնակօշիկներ և կօշիկներ, զանազան կտորեղէն, լրագրի թուղթ, հին երկաթ, պղինձ, ցինկ և այլ մետաղեայ լոմ, հացի կտորներ, մոմի մնացորդներ, զանազան թիթեղեայ և այլ ամանիկներ, խողովակներ, շշեր և այլ ապակեղէն, զանազան շորեր ու սպիտակեղէն և այլն:

Չը պէտք է նեղվել նուէրի ոչ քանակից, ոչ որակից:

Բոլորն էլ վաճառվելու են և միջոցներ կը տան պահելու և կրթելու Թիֆլիսի աղքատ երեխաներին:

Նուիրված իրերը ստանալու համար կուղարկվեն յատուկ մարդիկ:

Տեղեկութիւնների համար դիմել գրաւորապէս Իւ. Զալլեցին (Վելիկօկնեաժեսկայա, 46) և Մ. Բէլօզէրսկիին (Ծղնէթսկայա, 17, բն. 2):

(Կ.) (առ.) 386. 10—6

ԲԺԻՇԿ

Զ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆՑ

Մայիսի 1-ից ընդունում է հիւանդներ

ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅՈՒՄ:

Ամառանոց ուսուցիչ Մ. Աւետիսեանցի:

(Հ. ու. Կ.) (առ.) 484. 10—7

Թիֆլիսի Ժողովարան

ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆ

Այսօր, կիրակի, մայիսի 16-ին

տեղի կունենայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

ՍԻՆԷՄԱՏՕԳՐԱՖ ՖԻՆԷՊԷՆԻ

Երեկոյթին կը նուագեն սազանդարներ:

Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են 1 րուբլի:

Սինէմատօգրաֆի սկիզբը երեկ. ժ. 9-ին:

557. 1—1

ԹԱՏՐՈՆԸ ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ

Այսօր Հայ Դրամատիկական Ընկերութեան ընդհանուր ժողովը պէտք է զբաղվի մի շարք հարցերով, որոնց մէջ ամենահետաքրքրականն այն է, թէ ինչ կազմակերպութիւն տրվի թատրոնական գործին առաջիկայում:

Երկու տեսակէտ կարող է լինել ներկայ դէպքում: Կամ մի կերպ կազմել առաջիկայ տարվայ համար մի նախահաշիւ և դրանով բաւականանալ, կամ թէ առաջարկելով գործունէութեան մի ծրագիր, որի իրագործութեան մի մասը կը լինի առաջիկայ տարվայ թատրոնական գործը, մշակել դրա համեմատ և նախահաշիւ:

Անշուշտ, Ընկերութեան անդամների համար աւելի հետաքրքրական և գրաւիչ է երկրորդ ձևը: Տարիներ շարունակ լսելով հայ թատրոնի անկայուն վիճակի մասին, Ընկերութեան անդամները ցանկանում են կրթական-հասարակական այդ գործօնի դրութիւնը տեսնել կարգաւորված նպատակայարմար կերպով:

Եւ իրաւունք ունեն:

Ամեն տարի փոփոխվող, յաճախ փակման սպառնալիքի տակ գտնվող գործը կորցնում է իր վարկը հասարակութեան առաջ և ցամաքում են աջակցութեան նաև այն աղբիւրները, որոնք կարող էին հանդէս գալ, եթէ ամենքը տեսնէին լուրջ ծրագրի գոյութիւն և նրա իրագործութեան համար եռանդուն ջանքեր համակարգված եղանակով:

Մշակե՞լ է արդեօք Ընկերութեան վարչութիւնը այդպիսի մի ծրագիր՝ չը գիտենք:

Բայց այդպիսի գործի կարևորութիւնը դարձել է այնքան հրամայողական, որ եթէ այսօր նա չէ կարող դրվել քննութեան սեղանի վրա, անշուշտ, պէտք է նորից յատուկ ժողով գումարել և այդ խնդիրը բազմակողմանի և լուրջ կերպով ուսումնասիրել:

Եթէ մենք կը բաւականանանք միայն «մի կերպ կառավարվելու» բանաձևով, այն ժամանակ կը շարունակենք միայն այն անորոշ, պատահական, տատանվող վիճակում, որի մէջ մենք գտնվել ենք մինչև այժմ:

Խնդրի կարևորութիւնը պահանջում է ուրիշ վերաբերմունք:

Ա. Քաջանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 14 մայիսի

Թագաւոր Կայսրի ծննդեան օրվայ տօնումը, Էդուարդ Թագաւորի մահվան պատճառով, յետաձգվեց թագակրութեան օրվան: Ցարսկօէ-Սէլօյի տաճարում առ. ժ. 11-ին մատուցվեց պատարագ, որին ներկայ էին Կայսրը, Օգոստափառ Դուստրները, Մեծ Իշխանները, Պետական Խորհրդի և Դումայի անդամները իրանց նախագահների հետ, ծովային և զինուորական բարձրաստիճան պաշտօնեաներ և այլն: Ապա կայացաւ նախաճաշ, որից յետոյ Կայսրը անցաւ հիւրերի միջով:

Նոյն օրը բոլոր եկեղեցիներում կատարվեցին մաղթանքներ: Մայրաքաղաքը զարդարված էր դրօշակներով, երեկոյեան լուսավառված էր:

Բազմաթիւ քաղաքներից տեղեկութիւններ ստացվեցին մաղթանքների մասին:

Արտասահմանից եկաւ հելլէների թագուհին: (Հ. Գ.)

Հէլսինգֆօրս, 14 մայիսի

Սէյմը միաձայն որոշեց ամենահպատակ մի ուղերձ ներկայացնել լօցմանական վարչութեան հարցի մասին. սէյմը միջնորդում է, որպէսզի Ֆինլանդիայի հիմնական օրէնքները հաշւի առնվեն, նոյնպէս և վերջին տարիներս ընդունված ձեռնարկութիւններից նրանք, որոնք անհամապատասխան են հիմնական օրէնքների հետ, ուղղվեն կամ վերացվեն: (Հ. Գ.)

Կօպէնհագէն, 14 մայիսի

Լօնդօնից վերադարձաւ Թագաւորը, ընդունեց մինիստր-նախագահ Ցելէին, որ ներկայացրեց ամբողջ կաբինէտի հրաժարականի խնդրագիրը: Թագաւորը հրաժարականը ընդունեց և խնդրեց Ցելէին առ այժմ շարունակել պարապմունքները: (Հ. Գ.)

Բերլին, 14 մայիսի

Ի նկատի ունենալով, որ Հիւսիսային Ամերիկան տրտունջներ յայտնեց չինական երկաթուղիների կառուցման առիթով, անհրաժեշտութիւն ծագեց բանակցութիւններ սկսել այդ հարցի վերաբերութեամբ: Կայացած պարիզեան համաձայնութեամբ որոշված է, որ Խանկօու-Կանտօն երկաթուղագծի կառուցումը տրվում է անգլիացիներին, Գերմանիան իրան է թողնում Խանկօու-Սէչուան երկաթուղագծի կառուցումը 800 կիլօմետր տարածութեան վրա, որոնցից 200 կիլօմետրը կառուցվելու է ամերիկական տեխնիկների հսկողութեան տակ: Այնուհետև նախագծվում է 1600 կիլօմետր տարածութեամբ գծի կառուցումն, որից Անգլիային և Ֆրանսիային բաժին է ընկնում 600-ական կիլօմետր, Հիւսիսային Ամերիկային 400. Յետագայ ձեռնարկութիւնների մէջ Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան գործելու են հաւասար իրաւունքներով:

Լանդտագը վերստին ձեռնարկեց ընտրողական իրաւունքի նախագծի քննութեան: Երէկ բոլոր ֆրակցիաների ժողովում վճռվեց մերժել օրինագիծը պարոնների պալատի խմբագրութեամբ: Այսօրվայ նիստի սկզբին մինիստր-նախագահը յայտնեց, որ եթէ լանդտագը հնարաւոր չը գտնէ կանգնել պարոնների պալատի տեսակէտի վրա, այն դէպքում կառավարութիւնը ճանապարհ չէ տեսնում դրական հետևանքի հասնելու:

Կայսրի աջ ձեռքի վրա ուռուցք գոյացաւ: (Հ. Գ.)

Տանժէր, 14 մայիսի

Սուլթան Մուլայ-Հաֆիդը իր սեփական նախաձեռնութեամբ դիպլօմատիական մարմնի աւագագոյն անդամին մի նօտա ուղարկեց, որով յայտարարում է, թէ վճռել է վերացնել իր պետութեան մէջ մարմնական պատիժը: (Հ. Գ.)

Րիօ-դէ-Ժանէյրօ, 14 մայիսի

Բրազիլիայի զանազան քաղաքներում տեղի ունեցան ցոյցեր Արգենտինայի դէմ: Գագիում և Սանտօսում ամբոխը յարձակվեց արգենտինեան հիւպատոսարանի վրա։ Ոստիկանութիւնները կարգ ու կանոնը վերահաստատեցին։ (Հ. Գ.)

—

Կանէա, 14 մայիսի

Վէնիզէլօսը հիւանդացաւ ֆէբրոյով։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 14 մայիսի

Պաշտօնապէս հաղորդվում է, որ խորտակված սուրզրեայ «Պլիւվիօզ» նաւակի վրա գտնվում էին 25 նաւաստի, որոնց թւում 3 օֆիցէր։ (Հ. Գ.)

—

Լօնդօն, 14 մայիսի

Նիւ-Եօրկում, Կօրկ կոմսութեան մէջ, մայիսի 13-ին տեղի ունեցան ընդհարումներ Րէդմօնդի և Օ'Բրիէնի կողմնակիցների միջև։ Մի քանի անձեր կործանվեցին։ Ոստիկանութիւնը բոլորովին անզօր է։ Նա ստիպված էր կրակել։ Սպանվեց մի մարդ։ (Հ. Գ.)

—

Բօմբէյ, 14 մայիսի

Մայիսի 13-ին բռնկված հրդեհը ոչնչացրեց մօտ 1000 տուն։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Հոկտեմբրեաններէ ֆրակցիայում մեծ տարաձայնութիւն է. մի մասը պնդում է արևմտեան նահանգների զեմստվօյի նախագծի մէջ մտցնել ստացուածքային ցենզ։ Ստոլիպինը կտրականապէս հակառակում է։ Հաւանական է, որ պառակտում լինի հոկտեմբրեանների և կառավարութեան միջև։ («Б.»)

—

Օդեսսա.—Լաւատեղեակ շրջաններում խօսում են, որ շուտով քննութիւն է նշանակվելու Օդեսսայի քաղաքապետութեան համար։ («Б.»)

—

Պետերբուրգ.—Այստեղ մեծ սենսացիա է առաջ բերում անգլիական «Journal»-ում տպված ռուսական զրահանաւերի կառուցման պլանների մասին։ Միշտ էլ Պետական Դումային մերժել են ծանօթացնել այդ պլանների հետ։ («Б.»)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Բիթլիսից մայիսի 4-ին գրված մասնաւոր մի նամակից տեղեկանում ենք, որ Մուշի դաշտը երկիւղալի դրութեան մէջ է։ Յայտնի աւազակ Մուսա և Ղասըմ բէկերը յետադիմական շարժումներ կազմակերպելու տենդային աշխատանքի մէջ են։ Նրանք ագդու կոչեր են ուղղում զանազան աշիրաթների (քիւրդ ցեղերի), հրաւիրելով վերջիններիս հակայեղափոխութիւն սանձելու։

Նամակագիրն ի միջի այլոց գրում է. «Բայց անոնց յաջողութեան համար չեմ երաշխաւորեր, քանի որ կառավարութիւնը շատ խիստ կը հետևի։ Բիթլիսի կուսակալը ինքն անձամբ գացած է այդ շարժումները տեղւոյն քննելու։ Դիարբէքիրի կողմերէն 2 հատ թնդանօթ բերուեցաւ ու ղըրկուեցաւ Մուշ, բայց պատճառը չի գիտցուիր։ Այնպէս կը խօսին, որ կառավարութիւնը որոշեր է կամ կորսընցնել կամ աքսորել այդ հռչակաւոր բէյերը»։

—

Սալոնիկ, 14 մայիսի

Դէպի Դրէնիցա արշաւանքը աջողութեամբ է առաջ գնում։ Երէկ տեղի ունեցան առաջին կռիւները Օստրօզուբ և Բաբօշիչի գիւղերի մօտերը։ Փոքրիկ խմբեր շրջում են գիւղերը և խլում են զէնքերը։ Զէնքեր խլվում են նաև սերբերից։

Մահմուդ Շէվքէթը և Տուրղութ փաշան երէկ մեկնեցին Գիլիան, այսօր վերադարձան Ֆէրիզովիչ։ Ըստ երևոյթին զինուորական մինիստրը արշաւանքի ամբողջ ժամանակաշրջանում կը մնայ Դրէնիցայում։

Երէկ Պէտրիցայի մօտերը բուլղարական մի հրոսակախումբ ընդհարում ունեցաւ ժանդարմերիայի հետ։ Մի հայդուկ և երկու ժանդարմ սպանվեցին։ (Հ. Գ.)

—

Հռօմ, 14 մայիսի

«Տրիբունան» պարսաւում է Բ. Դրան չափազանց մեծ պահանջները կրետական հարցում։ (Հ. Գ.)

—

Սալոնիկ.—Ալբանացիներին զինաթափ անելը կատարվում է արագութեամբ։ («Б.»)

—

Աթէնք.—Դրութիւնը յուզալի է. պատերազմական գործողութիւնները կարող են վրա հասնել անսպասելի կերպով և շուտափոյթ։ («Б.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թէհրան, 14 մայիսի

Արգելք է դրված Թէհրանում հրատարակվող «Շարք» և «Իրանը-Նօու» լրագիրների վրա, որոնք կշտամբել էին կառավարութեանը մինիստրներին յաճախակի փոփոխելու համար և մինիստրների հասցէին ուղղել էին Կրիլովի «Կվարտէտ» առակը։ Լրագիրները բողոքեցին, որ արգելքը դրվել է առանց քննութեան ու դատարանի։ Նախատեսվում է բուռն հարցապնդում Սիփէհդարին։ (Հ. Գ.)

—

Ուրմիա, 14 մայիսի

Սալմաստից հաղորդում են, որ սիւննիներով բնակված արևմտեան գիւղերը գրաւվել են Թիւրքերի ձեռքով։ Ասկէրների թիւը աստիճանաբար աւելանում է։ Թիւրքաց հիւպատոսը գրաւված շրջանների կալուածատէրերից վկայաթղթեր է վերցրել այն մասին, թէ Թիւրք ասկէրներն իրանց լաւ են պահում և որ կալուածատէրերը գոհ են Թիւրքերից։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Ինչպէս արդէն հաղորդվեց, մայիսի 23-ին Թիֆլիսի թեմի հայոց բոլոր եկեղեցիներում պէտք է կատարվին պատուիրակների ընտրութիւնները։

Հաղորդվեց և այն, որ Թիֆլիսում առաջադէմ բանակին պատկանող մի խումբ ինտելիգենտ անձինք և երիտասարդներ, կամենալով լուրջ և գիտակցական հիմունքների վրա դնել ընտրութիւնները, կազմեցին մայիսի 2-ին խորհրդակցութիւն։

Երկրորդ խորհրդակցութիւնը տեղի ունեցաւ երէկ, մայիսի 15-ին, երեկոյեան ժամը 8-ին, դարձեալ «Աղբիւր-Տարագի» խմբագրութեան դահլիճում, մասնակցութեամբ բազմաթիւ անձանց և ծխականների։

Այդ խորհրդակցական ժողովի նկարագրութիւնը կը տանք յաջորդ անգամ, իսկ առ այժմ մենք անհրաժեշտ ենք համարում պարզել, թէ ինչ նպատակի է ձգտում առաջադիմականների խումբը, կազմելով այդ խորհրդակցական ժողովները և որոշելով եռանդուն ընտրական պայքար մղել, ընտրելու որոշ ծրագրի համապատասխան արժանաւոր հոգաբարձուներ՝ Ներսիսեան դըպրոցի համար։ Այդ լուսաբանութիւնը անհրաժեշտ է մանաւանդ այն պատճառով, որ կազմվել է մի այլ խմբակ, որ սկսել է գործել վարագոյրի և դիմակի տակ, որի թագուն նպատակն է թողնել Ներսիսեան դպրոցի ղեկը այն մարդկանց ձեռքում, որոնց ձեռքին էր գտնվում մինչև այժմ և որից դպրոցը ազատելու համար աշխատում է հայ հասարակութեան գիտակից և արթուն մասը։ Այդ խմբակը այնքան հանրածանօթ է, որ հարկ չը կայ նրա անունը տալ։

Յայտնի է, որ չորս տարի առաջ մեր ազգային-եկեղեցական-կուլտուրական գործերը ղեկավարելու որոշումով հանդէս եկաւ մի կուսակցութիւն, որ խօսում էր պրօգրէսի, դեմօկրատիայի և ամենաազատամիտ գաղափարների անունով։ Հայ հասարակութեան առաջադիմական մասը, որի դրօշակակիրը հանդիսանում էր «Մշակ» լրագիրը, ոչ թէ որևէ ընդդիմադրութիւն ցոյց տուեց այդ հոսանքին, այլ ընդհակառակը, նոյնիսկ նպաստեց շատ վայրերում նրան և գործեց նրա հետ, համոզված՝ որ այդ հոսանքը արտայայտիչ է նոյն առաջադէմ մտքերի, որ ինքն ունէր։ Եւ ճշմարիտ, այդ նոր հոսանքի արտայայտիչները հրապարակ նետեցին ամենաառաջադիմական և ռադիկալ ֆորմուլաներ, խոստացան մեծամեծ րէֆօրմներ կրթական գործի մէջ, խոստացան բարձրացնել Ներսիսեան և միւս թեմական դպրոցների նիւթական-տնտեսական, բարոյական և մտաւոր մակարդակը։ Եւ հասարակութիւնը, հաւատ ընծայելով այդ ֆրազներին, թողեց նրանց գործելու, և մեր բոլոր թեմական և միւս դպրոցները, նրանց թւում և Ներսիսեան, Յովնանեան դպրոցները, ընկան այդ խմբի ձեռքը։

Եւ սակայն շատ շուտով առաջ եկաւ խորին հիասթափութիւն. շատ շուտով հասկացվեց, որ գործված է մեծ սխալ, որ ոչխարների փարախի մէջ ներս են թողնված գիշատիչ գայլեր։

Ներսիսեան դպրոցի քառամեայ կառավարութիւնը վերջին հոգաբարձութեան ձեռքով պարզ ապացուցեց, որ այն խօսքերը, ֆրազները, ֆորմուլաները, որոնցով հանդէս եկան նոր գործողները, լոկ դատարկ խօսքեր էին՝ մոլորեցնելու նպատակով հրապարակ նետված։ Այդ չորս տարվայ ընթացքում՝ թէ Ներսիսեան դպրոցի, թէ Երևանի թեմական դպրոցի նիւթական-տնտեսական, բարոյական և մտաւոր մակարդակը ոչ միայն չը բարձրացաւ, այլև սոսկալի կերպով իջաւ։ Նոր հոգաբարձութեան գործելակերպի ընդհանուր նշանաբանը ոչ թէ դպրոցի բարօրութիւնն էր, այլ ուրիշ նշանաբան։ Եւ շնորհիւ այդ նշանաբանի հալածվեցին լաւ ոյժերը, դուրս նետվեցին Յովնանեան դպրոցից Լ. Սարգսեանի պէս կարող մանկավարժներ և այլ ուսուցիչներ։ Անձեռնմխելի համարված գումարները ծախսվեցին, աշակերտների բարոյականը փչացաւ, ուսման մէջ առաջադիմութիւնը թուլացաւ և ստեղծվեց անկարգապահութիւն, խառնաշփոթութիւն, անկարգութիւն։ Եւ որ ամենագլխաւորն է, ժողովրդի մէջ մեռաւ հաւատը, վստահութիւնը դէպի Ներսիսեան դպրոցը, և մի քանի անձինք, որոնք կտակներ էին արել յօգուտ Ներսիսեան դպրոցի, շտապեցին քանդել իրանց կտակները։

Վերահաստատել ժողովրդի նախկին հաւատը և վստահութիւնը դէպի Ներսիսեան դպրոցը, բարձրացնել Ներսիսեան դըպրոցի նիւթական, բարոյական և մտաւոր մակարդակը, վերահաստատել աշակերտութեան մէջ կարգապահութիւն, ուսումնասիրութեան, ճանաչողութեան ոգին—ահա ինչ է հարկաւոր և ինչ է պահանջվում նոր հոգաբարձութիւնից։ Եւ դրա համար հարկաւոր է մտցնել նոր, թարմ, առաջադէմ ոյժեր և շիտակ անձինք, որոնք այլ ևս չը ղեկավարվին նեղ, ծայրայեղական ոգով, որոնք ամէնից առաջ դպրոցի շահերն ունենան ի նկատի, և ոչ նեղ-կուսակցական շահերը, իրանց մարդկանց շահելու ձգտումը։

Յաջորդ անգամ աւելի մանրամասն կը խօսենք։

Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Գանձակ, 11 մայիսի

Ս. Յովհաննէս եկեղեցու ծխ. դպրոցի հոգաբարձուները մօտ օրերս հրաժարական էին ներկայացրել, բայց հոգ. իշխանութիւնը յետ դարձնելով հրաժարականը՝ պատուիրել է հոգ. կառավարութեանը յորդորել նրանց մնալ իրանց պաշտօնում, իսկ հակառակ դէպքում ներկայացնել գրաւոր պատճառաբանված մանրամասն բացատրութիւն։ Լսում ենք, որ հոգաբարձուները, հաստատ մնալով իրանց որոշման, պատրաստվում են պահանջված բացատրութիւնը ներկայացնել ըստ հարկին է։

Դեռ չը վերջացած ուսում. տարին, դեռ չը կազմված դպրոցի նախահաշիւը և չը մտածված ուսուցչ. կազմի լինելու չը լինելու մասին՝ հրաժարական տալ, դպրոցը երեսի վրա ձգված թողնել, հարիւրաւոր սովորողների բաղդը անորոշութեան մատնելով, դա չը մտածված քայլ է։

Արդեօք լաւ չէ՞ր լինի գոնէ սպասել ուսումն. տարվայ վերջանալուն և դպրոցը եկող ուսումն. տարվայ հետ կապող գործերը կանոնաւորելուց յետոյ միայն հրաժարական տալ։

Ասենք՝ դպրոցն անորոշ կացութիւնից կազատի ապագայում ընտրվելիք հոգաբարձութիւնը մի քանի ամսից յետոյ՝ նրա գործերի հետ ծանօթանալով։ Իսկ թատրոնական շէնքի կառուցման խնդիրը, որ չորս տարի ձգձգվելուց յետոյ հազիւ էր լուծումն ստացել և մօտ էր սկսվելու. այդ խնդիրն ո՞ւմ են թողնում։ Նոր հոգաբարձութեա՞ն։ Թողնել, մի հանրօգուտ և հետևաբար համակրելի շինութեան գործ թերի և հեռանալ՝ դա անխղճութիւն է։

Զարմանալի է, որ ս. Յովհաննէս եկեղեցու ծխականները, որոնց շրջանում քիչ չեն ինտելիգենտներ, սոյնանման դէպքերում միշտ փայլել են անտարբերութեամբ։ Նրանք, կարծես, փախուստ են տալիս հասարակական գործերում դեր խաղալուց՝ հրապարակը թողնելով միանգամայն անհամապատասխան անձնաւորութեանց։ Այդպիսի անտարբերութիւնը, այն էլ ինտելիգենցիայից, աւելի քան դատապարտելի է։

Սարգօ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

(Քահանաներին առճիկ նշանակելու առիթով)

—

Բագու, 9 մայիսի

Անցեալ կիրակի, ամսիս 2-ին, Բագուի հայոց եկեղեցիների ծխ. հոգաբարձութիւնը ժողովի էր հրաւիրել հայ հասարակութեանը, սակայն այդ օրը ծխականների թիւը շատ աննշանն լինելով ժողովը յետաձգվեց այսօրվայ։

Ժողովին ներկայ էին 100—120 հոգի հասարակութիւնից և ամբողջ հոգաբարձական կազմը։

Նախագահում էր Ս. Թաղիանոսեան։

Ընդհանուր ժողովի զբաղմունքների առարկաներն էին՝

1) Ծխականատրութիւնները վճարի ենթարկելու և քահանաներին ռոճիկ նշանակելու առիթով կազմված նախագծի քննութիւնը։

2) 1910/11 ուսումն. տարվայ նախահաշուի քննութիւնը։

3) Ընթացիկ խնդիրներ։

Հոգաբարձութիւնը ցրած յայտարարութիւն-թռուցիկի մէջ յայտարարում է, որ՝ անկախ ծխականների թւից՝ ժողովը օրինական կը համարվի իբրև երկրորդ ժողով, և խնդրում է ծխականներին աշխատել անպատճառ ներկայ լինելու։

Նախագահը ժ. 12-ից քիչ անց ժողովը բացվելով հարց տուեց ժողովականներին, թէ օրինաւո՞ր են համարում ժողովը թէ ոչ…

Եղիշէ աւ.-ք. Գեղամեան.—Հանգուցեալ Խրիմեանի կանոնադրութեան համաձայն (յօդ. 64 և 60), օրինաւոր են այն ժողովները, որոնց մասնակցում են ծխականների $^2/_3$ մասը։ Ասում են, որ Բագուն ունի 16,000 ծխական, որի թիւն ես չեմ հաւատում, որովհետև այդ մասին տեղիս հոգևոր կառավարութիւնը կանոնաւոր տեղեկագիր չունի կազմած։ Այդ ծխականները բաժանված են 12 քահանաների միջև, իւրաքանչիւրին 300 ծուխ։ Ես չեմ պնդում, որ անպատճառ այդ թւի կէսը կամ քառորդը ներկայ լինի, որը անկարելի է, սակայն այժմ այստեղ ներկայ եղող ծխականների թւից և այս ժողովի իրաւասութիւնից բարձր եմ համարում օրակարգի խնդիրների լուծումը։ Հոգաբարձութիւնը պիտի մի շարք ժողովներ ունենայ արծարծելու և մարսելու իր առաջարկած սկզբունքի միտքը։ Ժողովը պիտի ներկայացուցչականծխական-պատգամաւորական լինի, ի նկատի ունենալով հարցի լրջութիւնը։

Բաչազեանց.—Ս. Լուսաւորչի հիմքերը չենք քանդում այս ժողովով… Քահանան ծխականից պիտի ստանայ իր վարձը թէ՞ հոգաբարձութիւնից՝ այդ միևնոյն է։ Որովհետև տէր-Եղիշէն ձեռնտու չէ, նրա համար էլ սկզբունքի խնդիր է առաջ բերում։ Ըստ հայր Գեղամեանի, պիտի ապօրինի համարել և այն մի շարք ժողովները, որոնք տեղի են ունեցել երկար տարիներում։ Տէր-Եղիշէի առաջարկած հարցերը «ջանջալների» և յետաձգելու նպատակով է։

Ե. Ք. Գեղամեան.—Անձնական է թէ չէ՝ այդ յետոյ, բայց անհրաժեշտ եմ համարում հրաւիրել նախագահի լուրջ ուշադրութիւնը այս ժողովի ապօրինութեան վրա՝ համաձայն կանոնադրութեան։

Բժ. Տէր-Գրիգորեան.—Կանոնադրութեան 53-րդ յօդուածը ծխականների թւի մասին՝ ոչ թէ վերաբերում է բնակիչների թւին, այլ ժողովին ներկայ գտնվողների։ Ժողովը օրինաւոր է համարվում, երբ ներկայ գտնվողների երկու-երրորդականը համաձայն է օրակարգի խնդիրների քննութեան և որոշման։

Յ. Խօջամիրեան.—Թաղային ժողովներում պիտի բացատրել գործի էութիւնը և քննել։

Շատ երկար վիճաբանութիւններից յետոյ, նախագահը առաջարկում է ժողովականներին, թէ ով օրինաւոր է համարում այդ ժողովը, թող նստած մնայ, ապօրինի

ՖԷԼԻԷՏՕՆ

«ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ»

—

19 տարի հրապարակախօսութեամբ եմ պարապում (ապահով եղէք, վեց տարուց յետոյ 25-ամեայ յօբելեանս չեմ կատարելու), մի հարիւր անգամ եղել եմ խմբագրատներում, երեք անգամ ինքս եմ եղել խմբագիր, չորս-անգամ խմբագիր-հրատարակիչ, երկու անգամ խմբագրութեան քարտուղար, յիսուն անգամ մամուլի ներկայացուցիչ, չորս անգամ ես եմ վռնդել, երեք անգամ բաժանորդներիս եմ վռնդել, իսկ միշտ էլ—19 տարի շարունակ—ընտանիքիս եմ վռնդել՝ երեխաներիս, կնոջս, և, այսքան փորձառութիւնից յետոյ, եկել եմ այն անդրդուելի եզրակացութեան, որ հայոց ազգի մէջ ամենաձեռնտու, շնորհակալ, արդիւնաւոր գրական գործը դարձեալ… թերթ հրատարակելն է։

Այո, թերթ։ Բայց ինչպիսի թերթ։

Ոչ այն թերթերի նման, որոնք հրատարակվում ու տպվում են այսօր կամ որոնք հրատարակվել ու տպվել են անցեալներում, ուր կան առաջնորդողներ, ներքին ու արտաքին տեսութիւններ, հեռագիրներ և այլ դրանց նման դատարկ բաներ. ոչ. այլ մի թերթ, որը յատկապէս նուիրված լինի «Նամակ խմբագրութեան»-ներին և ինքն էլ կոչվի «Նամակ խմբագրութեան»։

Այ, այդ տեսակ թերթն է՝ որ մեզանում կունենայ մի չը տեսնված աջողութիւն, կը տարածվի հազարաւոր օրինակներով և կը տայ հրատարակչին տարեկան, քիչը-քիչը, 6000—10,000 ր. մաքուր եկամուտ։

Դուք զարմանո՞ւմ էք։ Ի զուր։ Ահա բացատրեմ, յենված՝ իմ 19-ամեայ փորձառութեան վրա։

Ես կը տամ մի քանի պատկերներ միայն՝ վերցված մեր լրագրական իրականութիւնից, և դուք կը համոզվէք, որ հայերիս մէջ ամենաապահով խմբագիրը նա կը լինի, ով կը ձեռնարկի «Նամակ Խմբագրութեան» թերթի հրատարակութեանը։

Պատկեր առաջին։

Առաւօտեան ժամը 11-ն է. հայ թերթի խմբագրատուն է մտնում մի պարոն, ըստ երևոյթին մի ինտելիգենտ մարդ… ձեռքը տանում է գրպանը և այնտեղից հանում է մի թուղթ։

Երեսը կարմիր է, ճակատին ցցված են արիւնով լցված երակները, ձեռքերը դողդողում են, շունչը անհանգիստ է, աչքերը չռված և… արիւնով լի, բայց պահում է իրան շատ զսպված։

— Ի՞նչ ունէք դուք,—հարցնում էք նրան։

— Ոչինչ, մի փոքրիկ նամակ,—պատասխանում է ժպիտն երեսին։

Առնում էք ձեռքից այդ փոքրիկ նամակը, որ վերնագրված է՝ «Նամակ խմբագրութեան», և թերթում էք։

Մէկ, երկու, չորս, վեց, ութ թերթ։

Դուք սոսկում էք հէնց արտաքին տեսքից։ Բայց դա դեռ ծաղիկներն են, պտուղները գալիս են հետևից։ Կարդում էք.

«Ձեր թերթի այս-ինչ համարում մի ոմն Խ. Ս., խօսելով իմ մասին, թոյլ է տուել իրան մի շարք ագեղ և մամուլին անվայել խօսքեր, որոնք ապացոյց են այդ պարոնի լրբութեանն ու զրպարտիչ հակումներին։ Պարոնի անամօթութիւնը հասել է այն աստիճանի, որ իր զզուելի ու գարշանք ազդող ինսինուացիաներով ամենաանպատկառ կերպով հրապարակ է գալիս ապականելու մամուլի սուրբ և անարատ էջերը և…»

Ձեր շունչը կտրվում է, դուք այլևս անկարող էք շարունակել։

— Պարոն,—դառնում էք փոքրիկ նամակ բերողին,—մենք չենք կարող տպել այս նամակը…

— Ինչո՞ւ,—զարմանում է մամուլի սուրբ և անարատ էջերի պաշտպանը՝ աչքերը բաց ու խուփ անելով։

— Ինչպէ՞ս թէ ինչու. մի՞թէ դուք չէք նկատում, որ այս նամակը կարդալիս մարդ պէտք է իր քիթը բռնի։

— Այո, գուցէ փոքր ինչ խիստ է, բայց չէ՞ որ այն լիրբը, որի հայրը մաշկակար էր, իսկ մայրը լուացքանող, թոյլ է տուել իմ հասցէին մի շարք քստմնելի ակնարկներ. մի՞թէ դուք կարծում էք, որ ես նրան անպատիժ կը թողնեմ։

— Այո, բայց դրա համար կայ դատարան. դիմեցէք այնտեղ. կայ փողոց, հրապարակ. ձեր հաշիւը տեսէք նրա հետ ինչպէս կուզէք։

— Ոչ, պ. խմբագիր, դրա համար կայ լրագիր և ուզում եմ նրան այստեղ ապտակել։

Դուք խօսում էք, համոզում, բացատրում։

Բայց նա. նա ոչինչ չէ լսում, նրա ռնգները բաց ու խուփ են անում, աչքերը արնակալել են, շրթունքները դողդողում են, բռունցքը բաց ու խուփ է անում և… աղաչում, պաղատում, որ թոյլ տաս, որպէսզի նա գայ իր այս նամակով «մամուլի սուրբ ու անարատ էջերը» պաշտպանի։

— Չէ՞ որ սա «Նամակ խմբագրութեան» է, կայ իմ անուն ազգանունը, պատասխանատուութիւնը վերցնում եմ ինձ վրա,—պաղատում է նա։

— Այո, բայց ջնջեցէք այստեղից բոլոր հայհոյանքները և մենք կը տպենք,—ասում էք դուք։

— Վա՜հ, ինչ էք ասում. այս նամակի ողջ լազաթը, նրա ողջ ոյժն ու համը հէնց այդ դարձուածներն են. ինչպէս ջնջեմ ես նրանց։

Դուք անողոք էք։ Իսկ նա՞։

— Գիտէք ինչ. ես պատրաստ եմ մինչև անգամ վճարել դրա համար. առէք ինձնից 3—5—10 ռուբլի, միայն թէ անփոփոխ տպագրէք այս նամակս։

Եւ նա ձեռքը տանում է գրպանը, որ փող հանի, վճարի այդ լազաթն ու համը տպագրելու համար։

Եւ զարմանում է, որ դուք մերժում էք։

Զարմանում է, վերցնում է փոքրիկ նամակը, բարկանում ձեզ վրա, մի լաւ լազաթին հայհոյում է և, դուռը ձեր քթին շրխկացնելով, դուրս է գնում խմբագրատնից և… մտնում մի այլ խմբագրատուն։

Երկրորդ պատկեր։

Նոյն խմբագրատանն էք. բերում են պօստը՝ բաղկացած 15—20 նամակներից։ Բացում էք առաջինը՝ Նամակ խմբագրութեան, երկրորդը՝ Նամակ խմբագրութեան, երրորդը՝ Նամակ խմբագրութեան և այսպէս 12—15 նամակ. պօստի ողջ բերածի մէջ գտնում էք միմիայն երկու-երեք լղարիկ յօդուածներ ներկայացման, անասունների ցաւի, ուսումնարանի, վար ու ցանքսի մասին, իսկ միւսները բոլորն էլ «Նամակ խմբագրութեան» են, որոնց մէջ նամակագիրները խնդրում, պաղատում են անպատճառ տպագրել այդ՝ «աչքի առաջ ունենալով սուրբ ճշմարտութիւնը», «անաչառութեան վեհ սկզբունքը», «գրուածքի հասարակական մեծ արժէքը», նաև այն, որ «մեր քաղաքի ողջ հասարակութիւնը անհամբեր սպասում է այս նամակի տպագրվելուն»—աւելացնում են գրողները։

Կարդացէք այդ անաչառ նամակները, որոնց անհամբեր սպասում է հայ հասարակութիւնը, և նրանց մէջ կը հանդիպէք հետեւեալ երեք կարգի դարձուածքներին։

Առաջին կարգի դարձուածքներ.

«Նողկանքի զաւակ, պոռնիկ մաքերով, բարոյական սնանկութեամբ, անառակ բարքի տէր, գարշանքի նզովքով, զռռոցը յիշեցնում, լպիրշ բթամտութեամբ, …քով, պղերդ անամօթութեամբ, դաւաճան, մատնիչ, խուզարկու ոգի, անառատ հաջոցով, երկարականջ ծագումը, գարշանքի ծովը, շուրջը տարածած գարշահոտութեամբ, քստմնելի լրբութեամբ, լպիրշ» և այլն և այլն։

Միջին աստիճանի դարձուածքներ.

«Սև հարիւրեակային բնազդներ, դաւաճանական դիտումներ, փողոցի որդի, լպիրշ դարձուածքներ, զզուելի կերպարանքով, խուլիգանական ոգով, մատնիչին յատուկ գործելակերպ, ազգադաւ մտածումներ, իշի լօգիկա, բարոյական սնանկ, զեղծարար, երեսի կաշին, անմիտ ռանիցով, լպիրշ ճակատով, քստմնելի արարքը» և այլն և այլն։

Մեղմ դարձուածքներ.

«Իմ թշնամին, փոքրոգի նամակագիրը, անմիտ և դատարկ գրուածքը, զըպարտիչ ոճով, նօսր դիմակը, ամարդի վարմունք, ապուշ գլուխ, սև ոգի, խորամանկ դիտումներով, գաղտագողի նկատումներով, անօրինակ ագիտութեամբ, դաւաղիր հակումներով, խաբեբայական ոճով, անմիտ դատանցանքներով, անորակելի սրտով, յիմար դատողութեամբ» և այլն և այլն։

Բայց սրանք բոլորը չեն. կան non plus ultra դարձուածքներ, որոնք արդիւնք են գրողի բարձր բարոյականութեան թռիչքների, որոնց սակայն այստեղ գրել անկարելի է…

Եւ հարցը նրանումն է, որ բոլորն էլ պաղատում, պահանջում են տպագրել այդ՝ առանց փոփոխութեան, առանց նկատողութիւնների՝ լոկ նրա համար, որ այդ բոլորը համարողները կանգնեն։

Մեծամասնութիւնը նստած մնաց։

Այդ ժամանակ հայր Գեղամեանը նախագահին ներկայացրեց մի բողոքագիր, որի բովանդակութիւնը ծխականներին անյայտ մնաց։

Այնուհետև հոգաբարձու բժ. Թ. Զարգարեան կարդաց մի երկար զեկուցում քահանաների ռոճիկ նշանակելու համար ստեղծված դրութեան մասին։ Նա մանրամասն թւեց այն բոլորը, ինչ որ տեղի են ունեցել և ունենում Բագուի քահանաների և ծխականների միջև, թէ ինչպէս չքաւորի ննջեցեալն անթաղ է մնում, ինչպէս հարուստի ծխակատարութեան ժամանակ իրար գլուխ են պատռում քահանաները, ինչպէս իրար ծխերը գողանում են և այլն և այլն, և այդ բոլոր անախորժութիւնների վերջ տալու և հայ հոգևորականութեան պատիւը բարձր պահելու համար՝ հոգաբարձութիւնը անհրաժեշտ է գտել կանոնաւորելու ծխականների և քահանաների յարաբերութիւնը և բարելաւելու աւելի բարեխիղճ քահանաների տնտեսական վիճակը, ուստի և կանգնում է ծխաբաժանութեան վրա։

Հ. Եղիշէ.—Զեկուցման այն մասը, որ վերաբերում է ներկայ Վեհափառի թոյլտւութեանը՝ ռոճիկներ նշանակելու՝ և որը կարդաց բժ. Զաքարեան, ես առաջին անգամն եմ լսում. իսկ եթէ Կաթողիկոսը թոյլատրել է, մենք պարտաւոր ենք նրա հրամանը կատարել։ Ծխաբաժանութեան համար կասեմ, որ 1883 թ. ծխերը բաժանել ենք, երկրորդ անգամ նորից բաժանել ենք 1898 թ. Հ. Ս. Մելիքեանի հետ մի շարք ժողովներ ունենալուց յետոյ, և իւրաքանչիւր քահանային հասել է 350 տուն։ Աւելացած ծխականներին (նորեկներին) տարեկան մի անգամ բաժանել ենք քահանաների մէջև։ Սակայն հայ-թուրքական ընդհարումներից յետոյ ծխերը խառնվեցին և ամեն ինչ տակն ու վրա եղաւ։ Այդ առիթով պիտի աշխատէր հոգևոր իշխանութեան տեղիս ներկայացուցիչը, որը խիստ անտարբեր գտնվեց։ Ես կողմնակից եմ ռոճկին, բայց վստահ կերպով հաւատացած եմ, որ երկար չը պիտի տևէ այդ։ Ծխականներից ոչ ոք չէ կարող ասել, որ ես ծխակատարութեան ժամանակ մէկից դրամ պահանջած լինեմ կամ շատ-քիչ լինելու մասին խօսած, սակարկած. եթէ այդ հերքող լինի, ես պատրաստ եմ գլուխս տալ, ինչպէս և կը տամ այն դէպքում, եթէ 3000 ր. իւրաքանչիւր քահանայի ռոճիկ տալ կարողանայ հոգաբարձութիւնը։ Այս ժողովի նպատակը ոչ թէ մեզ ռոճիկներ նշանակելու և կարգ ու կանոն պահպանելու մէջն է, այլ որպէսզի ուսումնարանների գոյութիւնը կարելի լինի պահպանել. և հոգաբարձութիւնը աւելի պիտի կեղեքէ, բռնութիւն գործ դնէ ժողովրդի վրա իր նշանակած սակագնով, քան գործ են դրել քահանաները։

ԱԵ. Բալաեբար.—Ռոճիկներ նշանակելը ինչո՞վ է խախտում եկեղեցու սկզբունքները, հայր Եղիշէ։

Հ. Եղիշէ.—Հայոց եկեղեցին առևտրի առարկայ չէ, որ սակագին նշանակենք ծէսերի. նա ձի չէ, էշ չէ, գարեջուր չէ... կրօնական արարողութեան տակսա նշանակել չէ կարելի։ Ներսէս Շնորհալին, Ներսէս Աշտարակեցին և Գէորգ Չորրորդ կաթողիկոսներն իրանց կանոնադրութեամբ գին, սակագին չեն ընդունել, այլ նուէր։ Իսկ եթէ կամենում էք սակագին նշանակել, ի զուր է ձեր նշանակածը, քանի որ 1836 թ. պօլօժէնիան ունի այդ մասին նշանակած գներ. մկրտութեան համար նշանակված է 20 կ., պսակ՝ 40 կ., մեծի թաղումը 40 կ., փոքրի՝ 20 կ.։

Այնուհետև հ. Եղիշէն դառնալով ծխականներին յուզված ձայնով ասաց. «Տուէք քահանաներին Պօլօժէնիայի նշանակած գները, իսկ եթէ քահանան չը վերցրեց, տուէք վզակոթին և դուրս արէք. միայն թէ՝ ներկայ ժողովով տակսա մի նշանակէք. դրանով աւելի շատ պիտի կեղեքվէք»։

Կարա-Մուրզա.—Ես էլ կարծում եմ, որ ուսումնարանների դրութիւնն ի նկատի առնելով է հոգաբարձութիւնն այս ժողովին և միջոցին դիմել։

Գար. քահ. Ղուկասեան ձայն խնդրելով նախ մի գեղեցիկ նախատական կարդաց ժողովականներին, որոնք աջ ու ձախ խօսակցութեան ժամանակ քահանաների հասցէին անվայել ածականներ էին շպրտում։ «Երկնքից հօ չէ իջել քահանան,—ասաց նա.—դուք էք ընտրել և եթէ դուք անկեղծ լինէիք և անկաշառ, պարտաճանաչ, և ունենայիք տարրական հասկացողութիւն, լաւերին կը կընտրէիք. եթէ քահանաները վատ են, այդ ձեզանից է. նշանակում է, որ դուք ձեր բարձրութեան վրա կանգնած չէք եղել»։

Հայր Գարեգինը կողմնակից է հոգաբարձութեան մշակած նախագծին և համաձայն է ինչպէս սակագնին, նոյնպէս և ռոճիկ ստանալուն։

Հոգաբարձութիւնը ծխականների առաջ չէր ուզում խոստովանել, որ այդ ռէֆօրմը գլխաւորապէս ուսումնարանների գոյութիւնը պահպանելու համար է, չը նայելով որ ծխականներից մի քանիսը պնդեցին, սակայն վերջ ի վերջոյ, հոգաբարձուներից մէկը, Տիգ. Բէգզադեան, այդ խոստովանեց։

Ձայների մեծամասնութեամբ, երկար վիճաբանութիւնից յետոյ և առանց քուէարկութեան, ժողովականները համաձայնութիւն տուին հոգաբարձուների առաջարկութեանը։

Ժողովն ուշ լինելու պատճառով յետաձգվեց ու թողնվեց միւս անգամին, որպէսզի կարդացվի ծխակատարութեան համար նշանակված սակագինը։

Որպէսզի «Մշակի» ընթերցողները օր առաջ ծանօթանան այդ սակագնի հետ, ես հէնց այժմեանից առաջ եմ բերում։

Համաձայն հոգաբարձութեան մշակած կանոնագրի, ամեն մի օրինակատարութիւն կամ ծխակատարութիւն ունեցող ծխական դիմում է նախ իր ծխական քահանային, վերցնում է նրանից տոմսակ, որ օրինակատարութեան դէմ արգելք չը կայ, և ներկայացնելով այդ տոմսակը երէցփոխ.-հոգաբարձ. վարչութեան դիւանին կամ վարչութեան կողմից վճարներ ստացող յատուկ պաշտօնեային՝ վճարում է հասանելի գումարը, վաւերացնում է իր ստորագրութեամբ տուած գումարի քանակը և ստանում է անդորրագիր։ Այդ անդորրագիրը ծխակատարութիւն ունեցող ծխականը ներկայացնում է և յանձնում ծխական քահանային, որը պարտաւոր է անյապաղ և անխտիր կատարել պահանջված հոգևոր օրէնքը։

Թաղման համար հոգաբարձութիւնը որոշել է հետևեալ վճարը, որին ինքը Նուազագոյն վճար անունն է տալիս։

Մանկահասակ ննջեցեալների համար (մինչև 10 տար.) 3 ր., չափահասների համար առանց պատարագի և միայն մի քահանայի մասնակցութեամբ 5 րուբլի, պատարագով և երկու քահանայի մասնակցութեամբ 25 ր.։ 25 ր. վճարողի համար թաղման նախընթաց օրը կատարվում է մի հոգեհանգիստ և թաղման հետևեալ օրը սահմանեալ այգը։

Այն ննջեցեալներին, որոնց երկու քահանայից աւելի քահանայով կուզենան թաղել, բացի 25 րուբլուց՝ իւրաքանչիւր մասնակցող քահանայի համար 5-ական րուբլի էլ պիտի վճարեն։ Եթէ մի հոգեհանգստից աւելի հոգեհանգիստներ ուզենան կատարել, իւրաքանչիւրի համար 5 ր. պիտի տալ։

Կիրակի օրը կատարվող հոգեհանգիստը, երբ բոլոր քահանաները ներկայ են գտնվում, 15 ր. արժէ. իսկ հասարակ օրերի հոգեհանգիստը երեք քահանաների մասնակցութեամբ՝ 25 ր.։ Իսկ եթէ ամբողջ քահանայական խումբը մասնակցէ հոգեհանգստին, այն ժամանակ արժէ 50 ր. (նախկին յօդ. 8-դ)։ Այն հոգեհանգիստների համար, որոնք կը կատարվեն լի օրերը առաւօտեան ժամին կից կամ ճաշու պատարագով և մէկ քահանայով, պիտի վճարել 10 րուբլի *)։

Այժմ անցնենք միւս ծխակատարութիւնների վարձատրութեանը։

Մկրտութեան համար նուազագոյն վճար 4 ր., նշանադրութեան համար 10 ր., պսակի համար (կէսը հարսնացուի, իսկ կէսը փեսացուի կողմից) 20 ր.։ Բացի այդ վճարներից վարչութիւնը պիտի վերցնէ իւրաքանչիւր մկրտութեան համար առնուազն 20 կ. լուսագին, իսկ իւրաքանչիւր պսակի և ննջեցեալի համար 2-ական րուբլի։

Ծնօրհնէքի արդիւնքը գանձելու համար իւրաքանչիւր քահանային յանձնվում է ժապաւինեալ մատեան, որի մէջ նշանակվում է տան տիրոջ տուած գումարի քանակը։ Այդ դրամը և մատեանը քահանաները պարտաւոր են մինչև երեք օր յանձնել վարչութեան գանձապահին։

Գերեզման-օրհնէքի արդիւնքի գանձման մասին վերջնականապէս մշակված չէ։

Գանձանակ պտտացնելն իսպառ վերացվում է. որոշվում է միայն եկեղեցու երեք մուտքերի մօտ դնել երեք հատ կնքված տուփեր, 1-ին՝ «յօգուտ որբոց և այրեաց», 2-րդ՝ «յօգուտ եկեղեցւոյ», 3-րդ՝ «յօգուտ ս. Էջմիածնի»։ «Աշխարհ գալոցի» գանձանակը վերացվում է, իսկ «յիշելիքը» թողնվում ըստ առաջնոյն։

Հոգաբարձութիւնը շրջակայ արուարձանները բաժանում է քաղաքից և թողնում է հին ձևի։ Էրմանի-քենդ, Բայիլ և Բիբի-Էյբաթ, Քիշլի և Սպիտակ քաղաք և Բալախանի արուարձանների բնակիչները եթէ որևէ օրէնք կատարելու լինեն եկեղեցում կամ դրսում, պարտաւոր են վերոյիշեալ լուսագինը վճարել։

Հոգաբարձութիւնը Բագուի համար ութ քահ. բաւական է համարում, իսկ մի քահանայ էլ պաշտօնական հիմնարկութիւնների համար՝ դատարան, հիւանդանոց, բանտ և այլն։ Այդ վերջինս պիտի ստանայ ռոճիկ, իսկ ստացած հասոյթը պարտաւոր է յանձնել վարչութեան։

Ներկայ քահանաներին նշանակում են ռոճիկ 3000 րուբլի տարեկան, աւելացնելով այդ ռոճիկը իւրաքանչիւր հինգ տարին մի անգամ 300-ական րուբլի, մինչև որ ռոճիկը հասնի 3600 ր., այսինքն ամսական 300 ր.։ Իսկ նորընծայ քահանաներն ստանում են 2400 ր. տարեկան, որոնց ռոճիկը իւրաքանչիւր հինգ տարին մի անգամ պիտի աւելացվի 300 ր. մինչև 20 տարին լրանալը և այնուհետև պիտի մնայ ընդ միշտ։

Քահանաների ռոճիկն աւելացնելու իրաւունքը վերապահում է վարչութիւնը իրան՝ ծխական ժողովին առաջարկելու։

Դպիրները պիտի ստանան տարեկան 900 ր. ռոճիկ, և Բագուն պիտի ունենայ ութ դպիր. դպիրները պիտի ունենան միջնակարգ կրթութիւն։

Թէ քահանաները և թէ դպիրները կարող են ունենալ կրօնուսոյցի պաշտօն ծխական և պետական դպրոցներում, բայց ոչ աւել քան 18 դաս։

Ժամկոչներն ստանում են 360 ր. ռոճիկ և ննջեցեալ լողացնելուց արդիւնք։

Քահանաները և դպիրները իրաւունք ունեն տարեկան մի անգամ մի ամսով արձակուրդ ստանալ։

Կան նախագծի մէջ և այլ յօդուածներ, որոնք այնքան էլ նշանակութիւն չունեն։

Այդ նախագիծն է, որ պիտի կարդացվի ապագայ ժողովում և հաստատութիւն գտնէ ծխականներից։

Թէ ինչո՞վ կը վերջանայ այդ, ցոյց կը տայ մօտիկ ապագան։ Ս. Գարագաշ

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԻՑ

Պետերբուրգ, 6 մայիսի

Անցած զատկական տօները։

Եւ... Պ. Դուման իր գործունէութիւնն սկսեց գործակատար-բանւորների աշխատանքների բարենորոգման խնդրով։

Նոր օրինագիծը, որին նա երէկ տուեց իր վերջին վաւերացումն, ընդհանուր առմամբ մեզ հետևեալն է ասում.

«Առևտրական տների, պահեստանոցների, գրասենեակների և պետական ու քաղաքային հիմնարկութիւնների ծառայողների բանւորական օրը 12 ժամից աւել տևել չէ կարող, հաշւելով դրա հետ միասին և 2-ժամեայ միջադադարը։ Այնպէս որ բանւորական օրը հաւասարվում է 10 ժամին։

«Հարկ եղած դէպքում, վաճառականական հիմնարկութիւնների տէրերին իրաւունք է տրվում բանւորական օրը հասցնել 14 ժամի, այն պայմանով միայն, որ աւելացած 2 ժամը, տարեկան 40 օրից չանցնի։

«Ուսեալեղէնի խանութների համար՝ բանւորական օրը մաքսիմում 15 ժամ է։

«Անչափահասների համար (մինչև 17 տ. հասակը), բանւորական օրը, բացի վերոյիշեալ 2-ժամեայ միջադադարից, կրճատվում է էլի 3 ժամով, երեխաներին դպրոց ուղարկելու համար, որով նրանց բանւորական օրը հասնում է 7 ժամի»։

Գալով տօներին, Պ. Դուման որոշեց, որ «պետութեան բոլոր հիմնարկութիւնները—բացի երկաթուղու կայարաններից, նաւահանգիստներից և մի շարք ուրիշ հիմնարկութիւններից, որոնք ոչ մի ժամանակ փակվել չեն կարող—անպայման տօնում են Զատկին՝ 2 օր, Ծնունդին՝ 2 օր, Նոր-տարուն՝ 1 օր, փետրվարի 19-ին՝ 1 օր և բոլոր կիրակի օրերը»։

Ասել, թէ 3-դ Պետական Դուման սրանով բարենորոգեց գործակատար բանւորների աշխատանքի պայմանները, առնուազն ինքնախաբէութիւն է։

Եւ ահա թէ ինչու։

Նոր օրինագծով, ինչպէս մենք տեսնում ենք, վաճառականները կարող են բանւորական օրը հասցնել 14 ժամի, միայն այն պայմանով, որ յաւելեալ ժամերի գումարը տարեկան 40 օրը չանցնի։

Այս յօդուածով, de facto, նախկին 10-ժամեայ բանւորական օրը մնում է օդից կախված, որովհետև եթէ մենք իւրաքանչիւր 1 օրվան կցենք 2 ժամ յաւելեալ աշխատանք, տարեկան կը ստանանք 730 ժամ, որն անում է 30—31 օր։

Մինչդեռ օրինագիծը պահանջում է 40 օր։

Ուրեմն իւրաքանչիւր բանւորական օրը, ըստ օրինագծի, չը հաշւած տօներն էլ, հասնելու է ոչ թէ միայն 14, այլ և 15 ժամի, քանի որ հակառակ դէպքում տարեկան 40 օր ստանալ չենք կարող։

Սա առաջին թերութիւնն է։

Նրա երկրորդ բացասական կողմն է օտարադաւան ազգերի տօների անուշադրութեան մատնելը։

Ռուսաստանում, ինչպէս յայտնի է բոլորին, բացի քրիստոնեաներից կան և ուրիշ ազգութեան մարդիկ, օր. հրէաները, մահմեդականները և այլն... որոնցից իւրաքանչիւրն ունի իր զուտ ազգայնական-կրօնական պարտադիր տօները, ինչպէս օրինակ՝ մահմեդականների շաբաթական հանգստեան օրն ուրբաթ է, հրէաներինը՝ շաբաթ, իսկ քրիստոնեաներինը՝ կիրակի։

Պ. Դուման, որպէս համայն Ռուսաստանի ներկայացուցիչների պալատ (չեմ ասում օրէնսդրական), պարտաւոր էր այս կարևոր հանգամանքին էլ ուշադրութիւն դարձնել։

Ճիշդ է, ես կարող եմ չընդունել ոչ մի կրօնական սկզբունք, սակայն դա չէ նշանակում, թէ ես իրաւունք ունեմ բռնանալու ուրիշի համոզմունքների վրա...

Ի հարկէ որ ոչ։

Եւ նա պէտք է հաշւի առնէր դաւանանքների ազատութեան այս խնդիրն և ապա միայն արձակէր այս կամ այն որոշումը։

Նա չարեց այդ։

Վերջացաւ նրանով, որ մահմեդական գրուպպան, բողոքելով իրանց վրա գործ դրված բռնութիւնների դէմ, թողեց նիստերի դահլիճը և հեռացաւ։

Իսկ աջակողմեանները շւացնում էին։

Եթէ օրինագծի այս կէտը, անցնելով Պ. Խորհրդի միջով, ստանայ օրինական վաւերացում, կեանքի մէջ կունենայ այն հետևանքը, որ կամ, ի թիւս այլոց, կերպարանափոխված թղթի աստառի, կը դարդարէ մինիստրութեան թղթեայ շտեմարանի ազատ մասը և կամ թէ չէ՝ գործադրվելով կեանքի մէջ՝ պատճառ կը դառնայ մի շարք կրօնական ֆանատիկների գրգռման։

Օրինագծի երրորդ բացասական կողմն է 16-րդ յօդուածի վերջաւորութիւնը, որտեղ ասվում է. «Այս օրէնքների վերահսկողութեան գործը ընկնում է... եւ տեղական ոստիկանութեան վրա»։

Դումայի անկուսակցական անդամ Դ. Գուլկինը ապստամբվում է դրա դէմ և ասում.

«Ես չեմ կարող հաշտվել, թէ ոստիկանութիւնը կարող է բարեխղճօրէն հսկել օրէնքների իրականացման, որովհետև նա մեղուների արհեստով է պարապում։ Ինչպէս որ մեղուն իր բոյնն կազմում է առանց դեֆիցիտի, այսինքն որ նա վերցնում է իր հիւթը այն ծաղկից, որից նա կարողանում է վերցնել, նոյնպէս և ոստիկանութիւնը իր բոյնն կազմում է առանց դեֆիցիտների, որովհետև սա էլ վերցնում է նրանից՝ ումից որ կարողանում է վերցնել իր «մեղրի» հատիկները, այսինքն վաճառական դասից։

«Եթէ դուք,—շարունակում է նա,—մի կերպ կարողանաք ներս թափանցել ոստիկանապետի ձախակողմեան ծոցաջէբը, անշուշտ կը գտնէք մի «դաւթար», որտեղ կարգով ցուցակագրված են, թէ «Իցկէլը» որքան փող է վճարել, «Խացկէլը» որքան պէտք է տայ, իսկ «Մօշկան» ինչու չէ վճարում։

«Ես չեմ ցանկանում, որ առանց այդ էլ ողորմելի օրինագիծը աւելի ևս ոտնատակ տրվի ոստիկանների կողմից, իրանց պաշտօնի կօնտրիբուցիայի պատճառով, ուստի առաջարկում եմ ազատել այդ յօդուածն իր խայտառակ վերջաւորութիւնից»։

Ո՞վ կարող է չը համաձայնվել՝ ընտանեկան կրթութիւն ստացած հասարակ գիւղացի Դ. Գուլկինի հետ։

Ի հարկէ ոչ ոք, բացի 3-րդ Պետական Դումայից։

Եւ նա չը համաձայնվեց։

Օրինագծի այդ մասն էլ մնաց անխախտ իր կուսութեան մէջ։ Մ. Աղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մցխէթ ամարանոցից անցեալ օրը աւտոմօբիլով Թիֆլիս եկաւ և նոյն օրվայ երեկոյեան և եթ մեկնեց կոմսուհի Ե. Ա. Վորոնցովա-Դաշկովան։

◆ Պրոֆեսոր Մառը նորից եկաւ մեր երկիրը։ Նա Թիֆլիսով անցաւ մայիսի 12-ին, առանց կանգ առնելու, դէպի Անի։ Մի քանի օր այնտեղ մնալուց և պեղումների գործերը կարգադրելուց յետոյ, նա կուղևորվի Բաշ-Գառնի՝ անցեալ տարվայ սկսած ուսումնասիրութիւնները շարունակելու համար։ Գառնիի շրջանից Մառը կը վերադառնայ Անի։

◆ Թիֆլիսի քաղաքային կայքերը վերագնահատելու համար ընտրված կարգադրիչները ամսիս 20-ից կը սկսեն իրանց աշխատանքները։

◆ Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնն այս տարի լոյս կընծայի մի քանի գրքոյկներ գիւղատնտեսութեան զանազան ճիւղերից։ Արդէն նախապատրաստված են այն գրական նիւթերը, որոնց հիման վրա պէտք է կազմվեն գրքոյկները։ Խմբագրական աշխատանքը պէտք է յարմարեցնի նիւթերը կովկասեան պայմաններին և կատարի լրացումներ կովկասեան փորձերի ու ցուցումների համաձայն։ Այս օրերս լոյս կը տեսնէ առաջին գրքոյկը։

◆ Ինչպէս յայտնի դարձաւ, Վրաստանի էկզարխ Իննօկէնտի արքեպիսկոպոսը Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկիի հետ մեկնեց Սղնախ դիտելու այնտեղի Բօդբեի վանքը։ Ի միջի այլոց նորին բարձր սրբազնութիւնը նահանգապետի հետ մտաւ հայոց եկեղեցին, ուր տեղական քահանան հանդիպեց խաչ ու բուրվառով և շնորհակալութիւն յայտնեց բարձր հիւրերին իր և իր հօտի անունից՝ ուշադրութեան համար։ Նորին բարձր սրբազնութիւնը իր հերթին շնորհակալութիւն յայտնեց նրանց և երկար կեանք ցանկացաւ քահանային, ծխականներին և Գարեգին արքեպիսկոպոսին։

◆ Մեզ հաղորդում են, որ այս ամառ մեր երկիրը պէտք է այցելեն ուսանողական խմբեր, գիտնական ղեկավարների առաջնորդութեամբ, ծանօթանալու մեր երկրի բնութեան հետ և անելու մի քանի ուսումնասիրութիւններ։

◆ Թիֆլիսում եղանակները բաւական զով են դեռ։ Համարեա ամեն օր ճաշից յետոյ անձրև է գալիս, երբեմն և մեծ քանակութեամբ։ Այդ պարբերական անձրևներից քաղաքի շրջակայի խոտը փչացել է։

◆ Կայսերական Կովկ. Գիւղատնտեսական Ընկերութեան մէջ հարց է բարձրացված հիմնել գիւղատնտեսական թանգարան, որի համար հարկ կը լինի այժմեան շէնքի վրա կառուցանել նոր յարկ։

◆ Նովօրօսիյսկի համալսարանի պրոֆէսոր Մելիկովը մեկնեց Օդեսսա։

◆ Այսօր Թիֆլիսի Արտիստական ընկերութեան այգում տեղի կունենայ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգ. Ընկ. զբօսանքը։ Այս համակրելի ընկերութեան օրինակելի գործունէութիւնը շատ լաւ յայտնի է հայ հասարակութեան։ Այդ առիթով էլ պէտք է յուսալ, որ ընկերութեան զբօսանքը իր լայն ու ճոխ ծրագրով կը գրաւէ մեծ բազմութիւն։

◆ Մեզ հաղորդում են, որ վրացի կալուածատէրերի մի խումբ մտադիր է զբաղվել Ցիլեկ այծի պահպանութեամբ և բանակցութիւն է վարում Սարիղամիշի շրջանի մի յոյնի հետ՝ մշակելու գործնական ծրագիր և իրագործելու նրան այս տարվանից։

◆ Այսօր, ցեր. ժ. 10½-ին, Կ. Հ. Բ. Ընկերութեան Ղարաջեան դահլիճում նշանակված է Հայոց Դրամատիքական Ընկերութեան անդամների ընդհ. ժողովը, որ անպայման կը կայանայ՝ երկրորդը լինելով։

◆ Ստացանք «Արօր» ամսագրի ապրիլի համարը, որի բովանդակութեան մասին յաջորդ անգամ կը տանք տեղեկութիւն։

◆ Այս օրերս աւտոմօբիլով Ռիգայից Թիֆլիս եկաւ ընտանիքով՝ աւտոմօբիլների ընկերութեան ներկայացուցիչ Պօսէլը, որ այստեղից մեկնելու է Պարսկաստան։

◆ Մի խումբ երիտասարդ վրացի գրողներ ծրագիր են մշակում մի երեկոյթ կազմելու այս ամսի վերջերին։

◆ Այսօր Զուբալովեան ժողովրդական տանը, ցերեկով, Գասումանը դասախօսութիւն կը կարդայ գիսաստղերի մասին։

◆ Կովկասեան համալսարանի գլխաւոր կոմիտէտը դիմեց ի թիւս միւսների նաև Բագուի քաղաքային վարչութեանը, առաջարկելով դումայի միջոցներից գումար յատկացնել այդ կրթական հաստատութեան համար։

◆ Բագուի քաղաքային 27 միլիօն րուբլու փոխառութիւնից քաղաքային վարչութիւնը ստացել էր միայն 3 միլիօնի չափ գումար։ Այս ամսի վերջերին վարչութիւնը կը ստանայ դարձեալ ի հաշիւ փոխառութեան 1,700,000 րուբլի։

«Նամակ խմբագրութեան» են։

Իսկ հեռագիրները, որոնք տեղում են մէկը միւսի ետևից, երբ տպագրվելիքը մի երկու օրով ուշանում է. իսկ խնդիրքները՝ ուղարկել իրանց այն №-ը, ուր տպված կը լինեն այդ նամակները, 15—20—50 օրինակներով, որ տրվեն ծանօթներին. իսկ խմբագրատուն մարդիկ ու միջնորդներ ուղարկելը, դրամ առաջարկելը՝ տողով, гуртомъ и въ розницу.

Ահա այս բոլորը աչքի առաջ ունենալով, ես կրկնում եմ, որ «Նամակ Խմբագրութեան» թերթի լոյս տեսնելը մի այնպիսի անհրաժեշտութիւն է հայերիս համար, որը չը տեսնելն ու չը զգալը հաւասար է կուրութեան և ապուշութեան։

Թերթի կազմակերպութիւնը կը լինի այսպէս. նա կանուանվի «Նամակ Խմբագրութեան», անկուսակցական, անկախ, զուտ հայկական օրաթերթ։ Բաժնեգինը տարին մի րուբլի։ Ընդունվում են ամեն տեսակի նամակներ, հայհոյանքներ, յարձակումներ։ Խմբագրութիւնը ոչինչ չէ կրճատում, փոփոխում։

Տակսա

Յօդուածների և նամակների համար պէտք է վճարել. տողին՝ մեղմ հայհոյանքների համար 5-ական կոպ., երկրորդ կարգի՝ միջակ հայհոյանքների՝ 10 կոպ., իսկ առաջին կարգի, ամենաթունդ, ամենալազաթին, համով-հոտովների համար տողին 20 կոպէկ։

Բառարան

Բացի դա բոլոր գրողները կունենան «հայհոյական առձեռն բառարան», որը կօգնի ընտրելու ամենաթունդ հայհոյանքներ։ Հայհոյանքները կազմված են Աշտարակում։ Կան հայհոյանքի կլասիքական նմուշներ ամեն սեռի, հասակի և դիրքի մարդկանց համար, որով կը հեշտանայ գործը։

Իրաւաբ. բիւրօ

Խմբագրութիւնը կունենայ իրաւաբանական բիւրօ՝ բաղկացած մի քանի յայտնի փաստաբաններից, որոնք կօգնեն «Նամակ խմբագրութեան» հեղինակներին՝ վարելու գործը դատաստանական հիմնարկութիւնների մէջ։

Ջարդի բիւրօ

Բացի դա՝ այդ նամակագիրների տրամադրութեան տակ կը լինեն հարկաւոր դէպքերում փորձված ջարդողներ՝ դագանակներով, բռունցքներով և ծեծի ամեն տեսակ յայտնի ձևերով, որի համար պէտք է վճարել ըստ սահմանված սակագնի։ Ապտակ՝ 10 ր., քիթ ու բերան՝ 25 ր. և այլն։

Խմբագրութիւնը ազատ է ամեն մի պատասխանատւութիւնից։

Այժմ ասացէք խնդրեմ, կը գտնվի՞ ձեր մէջ գոնէ մի ապուշ, որը պնդի, թէ այդօրինակ թերթը չի ունենայ հազարաւոր ընթերցողներ, նոյնքան բաժանորդներ և տասնեակ հազար մաքուր եկամուտ։

Եւ ահա՝ թողած այսօրինակ թերթի հրատարակութիւնը, մեր խմբագիրները տպագրում են ինչ-որ առաջնորդողներ կուլտուրայի, դպրոցի, սկզբունքների մասին, տեղ են տալիս Պետ. Դումայի նիստերի արձանագրութեանը և կամ զանազան դատարկ-մատարկ յօդուածների թէ՝ միտինգը կարելի՞ է թէ՞ ոչ, ֆինանսների մինիստրը ինչ օրինագծեր ունի, և այլն և այլն։

Փորձեցէք «Նամակ Խմբագրութեան»-ի հրատարակութիւնը և շնորհակալ կը լինի ձեզ հայոց ազգը՝ մեծից մինչև փոքրը...

Սալ-Ման

---

*) Օրինակատարութեան ժամանակ հոգևոր պաշտօնեաների երթևեկութեան համար եղած կառքերի ծախքը օրէնքի տէրն է վճարում։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ժողովրդական Տանը, մայիսի 14-ին, դերասան Զինօվիեվի մասնակցութեամբ և նրա անմիջական ղեկավարութեամբ տրվեց «Սատանայ» դրաման: Անկասկած՝ ամենից շատ աչքի էր ընկնում Զինօվիեվի խաղը, որի առաջ նսեմանում էին միւս դերասանների խաղերը: Թատրոնական դահլիճը համարեա թէ լիքն էր: Հանդիսականները գոհ սրտով հեռացան թատրոնից:

◆ Արքունական թատրոնում նորից կըրկնվեց «Բիրօն» պատմական պիէսը և կատարվեց նոյն աջողութեամբ: Մի քանի անգամ կրկնվել է «Հենրիխ Նավարացի» պատմական պիէսը և այսօր նա ներկայացվում է ութներորդ անգամ: Պիէսի աշխուժութիւնը, տիպերի հմուտ մշակութիւնը և պատմական անցքի մեծութիւնը դարձնում են պիէսը հետաքրքրական:

◆ Այսօր Հուբալովեան Ժողովրդական Տանը տրվող հայկական ներկայացման խաղալու են Մարկ Տուէնի «Ինչպէս դարձաւ նա խմբագիր» և Յար. Թումանեանի «Ալք» պիեսները:

◆ Այսօր ցերեկով իտալական օպերային խումբը կը ներկայացնէ Արտիստ. թատրոնում «Տրավիատա» օպերան:

◆ Այսօր Վրաց Ազնուականների թատրոնում տեղի կունենայ վրացի երաժիշտ Պօցխվէրաշվիլիի համերգը վրացական ժողովրդական երգերից:

◆ Մայիսի 14-ին Արտիստական թատրոնում «Էրնանի» օպերայի ներկայացումը, որին մասնակցում էին իտալական խմբի լաւագոյն ուժերը, ունեցաւ մեծ աջողութիւն: Ներկայացումը գրաւել էր հանդիսականների մեծ բազմութիւն:

◆ Ամառային սէզօնը ի թիւս միւսների աշխուժութիւն տուեց նաև տեղական սինեմատօգրաֆներին: Սրանցից աչքի է ընկնում «Մուլէն-էլէքտրիկ» թատրօնը, ուր ցուցադրվում են հետաքրքրական պատկերներ զանազան իմաստի: Յետ չէ մնում նաև «Մուզա» թատրօնը, որ անցել է նոր տէրերի ձեռքը, որոնք ամեն կերպ աշխատում են հասարակութիւն գրաւել նորութիւններով և գիտական, տեղական և կոմիքական պատկերներով:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Հօջա Ղազար Գրիգորեան անունով մի հարուստ հայ, 1774 թ., Հնդկաստանից ճանապարհորդած միջոցին, շոգենաւում մեռնում է անկին ու անզաւակ, թողնելով 890,000 ռուփի (մօտ 1.335,000 ր.): Նրա մահվանից յետոյ նրա ժառանգները շատ աշխատեցին, բայց չը կարողացան ոչինչ ստանալ: 1864 թ. հանգուցեալի եղբայրը մեկնել է Հնդկաստան՝ իր եղբօր թողած ժառանգութիւնն ստանալու, բայց նա ևս այնտեղ մեռնելով 140,000 ռուփի (մօտ 210,000 ր.) էլ ինքն է թողել անգլիական մի դրամատան մօտ: Սակայն այդ վերջին գումարը, շնորհիւ այն ժամանակի Կ. Պոլսի պատրիարք Պօղոս արքեպիսկոպոսի ջանքերի, կարողացել են ստանալ հանգուցեալի ժառանգները, մինչդեռ մեծ գումարը դեռ ևս մնում է անգլիական բանկում: Ժառանգական այս խնդրի առիթով Կ. Պոլսի հայ թերթերը ազգ. պատրիարքարանի ուշադրութիւնն են հրաւիրում, ցոյց տալով որ թէև խնդիրը մասնաւոր բնոյթ է կրում, բայց պատրիարքարանն ի պաշտօնէ պարտական է մատեանները քրքրելով ստուգել, թէ ովքեր են այդ հսկայական գումարի օրինական ժառանգները:

◆ Կաթողիկոսական կոնդակը՝ եկեղեցիներում մետինգների կազմութիւնը արգելելու համար, ինչպէս տեսնվում է Կ. Պոլսի հայ թերթերից, գրգռել է այդտեղի դաշնակցականների (որոնց այժմ թերթերը սօփաջիներ են անուանում) զայրոյթը: «Այդ կոնդակը,—ասում են նրանք,—հակասահմանադրական է, քանի որ ազգային ժողովի որոշումն է բեկանում»: Այդ առարկութեան «Բիւզանդիոն» և այլ թերթերը պատասխանում են, թէ սօփայի ճնշումների և սպառնալիքների տակ կորզված և չը քուէարկված որոշումը սահմանադրական չէ:

◆ Կ. Պոլսի պատրիարքը Անգլիայի Էդուարդ թագաւորի մահվան առիթով ցաւակցական հեռագիր է ուղարկել Լօնդօն և իր փոխանորդին ևս ուղարկել է Կ. Պոլսի անգլիական դեսպանատունը ի դիմաց Թիւրքիայի հայ ժողովրդին ցաւակցութիւն յայտնելու դեսպանին:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 մայիսի

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ: Խողովակից ընկած կայծից հրդեհ ծագեց պղնձահանքում: Վնասը 100,000 ռուբ. է:

ՕԴԵՍՍԱ: Առաւօտեան ռումինական պատգամաւորութիւնն այցելեց զինուորական և քաղաքացիական բարձր պաշտօնեաներին:

ՄՈՍԿՎԱ: Համալսարանի պրօֆէսօրների կարգապահ դատարանը որոշեց նկատողութիւն անել Պուրիշկէվիչի առիթով որոշում կայացնելու համար:

ՌՕՍՏՕՎ Դ/վ.: Նախիջևանի մօտ շրջատեղում ապրանքատար գնացքը խորտակվեց: Շատ վագօններ ջարդվեցին. մի քանի մարդ վիրաւորվեցին:

Երթեւեկութիւնը կատարվում է ընդմիջումներով:

ՕԴԵՍՍԱ: Ցուցահանդէսի բացումը տեղի կունենայ մայիսի 25-ին:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Զինւորական մասնագէտ-բժիշկների
Երթեւեկ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ:
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՕՊ.
Տէլէֆօն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ:

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.:

ԲՕԺՕՎՍԿԻՅ—ներքին, բժշկութիւն ներշնչումով, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.:

ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 2—3 ժ. ցեր.:

ԳՐԷՅՑ—աչքի հիւանդութիւն., ամեն օր 2—3 ժ.:

ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—2 ժ.:

ԿԱԼԱՄԿԱՐՕՎ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի օրերից:

ՆՕՎԻՑԿԻՅ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.:

ՐԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ., կիրակի՝ 10—12 և կէսը:

ՊԱՎԼՕՑԿԻՅ—խիրուրգիական հիւանդ., ամեն օր՝ 4—5 ժ. ցեր.:

ՏԷՏՐԱԶԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.:

ԿԻՆ ԲԺ. ԽՈՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.:

ԱՍՊԻՍՕՎ—կոկորդի, քթի, ականջի հիւ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.:

ԲԱԼԴԻՆԱ-ՆՕՎԻՑԿԱՅԱ—քթի, կոկորդի և ականջի հիւ., ամեն օր՝ 11½—12½ ժ. ցեր.:

ՇԱՄԱՇ—խիրուրգ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.:

ՋՈՒԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլեքտրօթէրապիա., երկուշ., չորեքշ. և ուրբաթ, ցեր. ժ. 4—5-ը:

ՄԽԻԹԱՐԵԱՆ Ա.—սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ 9½—10½ ժ. առ.:

ՊՕՆԴՕԵՎ—ջղային հիւ. և էլեքտրօթէրապիա. ամեն օր, ժամը 11—12-ը:

ԼԻՄՕՆԻ ատամնաբոյժ--ամեն օր՝ 9—11½ ժ. առ.:

Համախորհուրդ, օպէրացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնօզ, ստնդուների և ծառաների քննութիւն—առանձին վճարով: Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի:
(կ.) 356. 100—34

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԻԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:
Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը:
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը:
Կուկիա, Սեմեօնօվսկայա փ. № 16.
Տէլէֆօն № 40.
(ե. ու. կ.) 984. 100—89

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՊԵԱՏԻԳՈՐՍԿ,
ուր ամառը կընդունէ հիւանդներին:
Սիֆիլիս, միզասեռական և վեներական հիւանդութիւններ:
(ե. հ. կ.) 955. 100—91

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԴԻՄՈՂ ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ!
ԴՕԿՏՕՐ Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆ
(Ասիստենտ պրօֆ. ՍՏՐԱՍՄԱՆԻ եւ ԽՕԶԷՖԻ)
Ընդունում է ամեն տեսակ հիւանդների և առաջնորդում նրանց համապատասխան մասնագէտների մօտ:
Հասցէն՝ Berlin—Charlottenburg. Leibnizstr. 29.
(ե. հ. կ.) 523. 5—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՂԱՔԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԴԱՀԼԻՃ
Վելյամինօվսկայա, № 7.
Շարունակվում է ընդունել ամեն տեսակ կահկարասիք ԹԷ ԾԱԽԵԼՈՒ և ԹԷ ՊԱՀԵԼՈՒ համար:
539. 10—2

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
(իրաւունքներով)
Յ. Զ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Ընդունելութեան քննութիւնները տեղի կունենան մայիսի 26-ից մինչև յունիսի 3-ը: Ուսման վճարը աշակերտուհիների համար 25% էժան:
Միխայլօվսկի պր. № 16—18.
(ե.կ.) 525. 2—2

ՀՐԱՒԷՐ

Այսօր, կիրակի, մայիսի 16-ին, Կուկիայի Նորաշէնի ս. Աստուածածնի եկեղեցում պատարագից յետոյ, ժամը 12-ին կը կայանայ երրորդ և վերջին ծխական ընդհանուր ժողով. ուստի նոյն եկեղեցու ծխականները հրաւիրվում են ներկայ լինելու ժողովին: Զբաղմունքի առարկաները լինելու են. 1) Ընթերցումն սրբ. կոնդակի Վեհափառ Կաթողիկոսի: 2) 1909 թ. հաշուետուութիւն և 1910 թ. նախահաշիւը: 3) Դպրոցի ուսուցիչների խնդրի զեկուցումը 1910—1911 թ. դպրոցի գոյութեան առիթով և հոգաբարձութեան կարծիքը: 4) Վարդանէսեանցի խնդրի զեկուցումը: 5) Ընթացիկ հարցեր:
1—1 556. Հոգաբարձութիւն

Հրաւէր

Կիրակի, մայիսի 16-ին, ցերեկվայ ժամը 11-ին, Քամոյեան ս. Գէորգ Նորակառոյց եկեղեցում կայանալու է ծխ. ընդհանուր ժողով:

Օրակարգ.

1) Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ դպրոցի բացվելու առիթով ստացված կոնդակի ընթերցումը:
2) Հոգաբարձութեան գործունէութեան զեկուցումը:
3) Վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը:
4) 1909 թ. հաշուի և 1910 թ. նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը:
5) Դպրոցական գործունէութեան զեկուցումը:

Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու
Հոգաբարձութիւն
(ա. օ.) 315. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետեւեալ նոր գրքերը.

«Արշակ Երկրորդ» Ղազարեանի 30 կ.: «Հիդրա» դրամա 5 արար., թարգ. Փրանս. Փափազեանի 50 կ.: «Ժողովրդական թատրօն», ժողովածու, Ա. հատ. և Բ. հատ. (առանձին հատ. 1 ր.),—2 ր.: Րաֆֆի. «Ջահ բումար» 2 րուբլու փոխարէն վաճառվում է 1 ր. 50 կ.: «Աշըղ-Ղարիբի հէքիաթը», հանդերձ երգերով, Աշըղ-Ջիւանիի 40 կ., «Քեարամի և Ասլիի հէք», հանդ. երգ. 60 կ., «Մելիք Շահի հէք.», հանդ. երգ. 30 կ., «Շահ Իսմայիլի հէք.» հանդ. երգ. 30 կ., «Արշալոյս և Լուսաբեր», հէք. հանդ. երգ. 30 կ., «Քեօրօղլի» հէք. 15 կ.: «Հողի պարարտացումը», գիւղատնտեսի զրոյցներ, I զրոյց, Աթանասեանի 15 կ.: «Հայոց եկեղեցու վարչութիւնը և ծուխը» բժիշկ. Ս. Շահ-Նազարեանցի 60 կ.:

Օտար քաղաքներից պէտք է դիմել՝ Тифлисъ, Центральной книжаой торговлѣ.
522. 1—1

Երկրորդ տպագրութիւնով լոյս տեսաւ

„ՇՈՒՇԱՆԻԿ“

գրքոյկը (պատկեր հինգերորդ դարի հայ կնոջ), պատմական և կենսագրական մասերը աւելացած և բարելաւած: Վաճառվում է Թիֆլիսի հայ գրավաճառանոցներում: Ցանկացողները կարող են և դիմել ինձ՝ հետևեալ հասցէով. Тифлисъ, Тюремному священнику Григорису Матинянцъ. Տասը օրինակից աւելի գնողները ճանապարհի ծախս չեն վճարում:

Գրիգորիս քահ. Մատինեանց
(կ. հ.) 533. 2—1

Հրատարակութեամբ երևանի «ԱՐԱՐԱՏ» գրավաճառանոցի տպագրվում է և շուտով լոյս կը տեսնի Յ. Տէր-Մարտիրոսեանի և Ռ. Օհանջանեանի կազմած

◇— ԴԱՍԱԳԻՐՔ
ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ —◇

համաձայն «Հայոց եկեղեցական տարրական դպրոցների ուսումնական ծրագրի»:
(կ. հ.) 559. 3—1

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ս. Էջմիածնի սինօդի հրամանով ՉՐԿԻՆԵԱՆՑ ս. Կարապետ եկեղեցում այսուհետև մի քահանայի շտատ է լինելու: Ուստի առաջարկում եմ հանգուցեալ Սիմէօն քահ. Աբրահամեանցի յարգելի ծխականներին, եթէ կամենում են ինձ իրանց ծխատէր քահանայ ը գունել, մինչև մայիսի 20-ը յայտնել ինձ իրանց ցանկութիւնը և տան հասցէն:

Գրիգորիս աւագ քահ. Երզնկեանց
562. 1—1

ПРЕВОСХОДНЫЙ
ГЛЯНЦЪ ЛАКЪ
ДЛЯ ЧИСТКИ
ОБУВИ
ФАБРИКИ
А.ЗАКСЪ
С.ПЕТЕРБУРГЪ КАЗАНСКАЯ 6
А.ЗАКСЪ
С.ПЕТЕРБУРГЪ
№6

(П. 43004) 447. 10—7

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու միաբանական դրամարկղի
առ 15-ն մայիսի 1910 թւի

ԱԿՏԻՎ	Ռ.	Կ.
I. Պահ. գում. Թիֆ. Առեւտ. Բանկում № № 55078, 55896, 55954 տոմսերով	1210	58
II. Տոկոսաբեր թղթեր 3 հատ Պետ. անընդհատ %-բեր տոմսեր № № 129432, 142136 և 151375 արժողութեամբ 500 ր.	500	—
III. Կանխիկ դրամ Նորին բարձր սրբազնութեան Թիֆ. թեմ. առաջնորդի մօտ	810	58
IV. Փոխարինաբար տուած գումար ա) Հանգուց. Ղ. ա.-ք. Խարազեանին 810 ր. 58 կ. բ) Գ. ա.-ք. Աղանեանին 610 ր. 58 կ. գ) Գ. ք. Խօջաէյնաթեանին 610 ր. 58 կ.	2031	74
V. Շարժական գոյք Երկաթեայ դրամարկղ	75	—
	5627	90

ՊԱՍՍԻՎ	Ռ.	Կ.
I. ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ա) Նուիրաբերութիւն զանազան անձերի 1. Բաստամեան Բարբառէ 400 ր. 2. Կուզինեան Միքայէլ 1000 ր. 3) Ջամոյեան Յակոբ 750 ր. 4) Ալիխեան Յովսէփ 1000 ր. 5) Սերեդենկօ Մարիամ 300 ր. 6) Աբիսալոմեան Հասրաթ 750 ր. 7) Վարդանեան Սողոմոն 1090 ր. 50 կ. Ընդամենը 5290 ր. 50 կ. բ) Խնայողութիւն Միաբանութեան անդամների 337 ր. 40 կ.	5627	90
	5627	90

Ծանօթութիւն.—I. Հանգուցեալ Աւետիք Ղուկասեանը կտակել է միաբանական դրամարկղին 2000 ր., որպիսի գումար չէ ստացված կտակակատար պ. Մնացական Խունունցից, թէև դիմումներ եղել են այդ գումարը մշտնջենական աւանդ դնելու նպատակով, բայց առ այժմս ոչ մի դրական հետևանքի չէ յանգել:

II. Հանգուցեալ Յովսէփ Բաբանասեանը կտակել է միաբանական դրամարկղին 1500 ր., բայց կտակակատար Ալէքսանդր Գրիգորեան Այվազեանը չէ մուծել այդ գումարը միաբանական դրամարկղը և ոչ մի պատասխան չէ ստացվում:

III. Հանգուցեալ Ղ. ա.-ք. Խարազեանի փոխարինաբար վերցրած պարտքը կը գանձվի նրա թողած հուլարկանի տան արդիւնքից. արդէն դիմված է օրինական միջոցներին:

Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու աւագ երէց՝ Եզնիկ ա.-ք. Երզնկեան
554. 1—1

ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԺԻՐԱՐԴՕՎԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ
—ԳԻԼԻ ԵՒ ԴԻՏՐԻԽ—
Դվորցովայա փ. և [illegible]. տելեֆոն № 145.
ԽԱՆՈՒԹԸ ՎԵՐԱՆՈՐԳԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ
Երկուշաբթի օրվանից, մայիսի 17-ից, մի ամսով
Նշանակված է **ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌ**
Սեզոնական եւ [illegible] ապրանքների
—**ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ**—
(կ.ե.) 561. 2—1


Продано болѣе двухъ милліоновъ банокъ
Продано болѣе двухъ милліоновъ банокъ
Отъ сѣвернаго полюса до южнаго женщины убѣдились что только
КРЕМЪ КАЗИМИ
МЕТАМОРФОЗА
РАДИКАЛЬНО УНИЧТОЖАЕТЪ
ВЕСНУШКИ УГРИ, ПЯТНА
И ДРУГІЕ ДЕФЕКТЫ ЛИЦА
ВСЕРОССІЙСКАЯ ВЫСТАВКА 1896
УТВ. ДЕПАРТ. МАНУФ. И ТОРГОВЛИ ЗА № 4683
ТРЕБУЙТЕ ПОДПИСИ
Calum

(П. 54227) 530. 9—1

ՁՐԻ!!! 30 ՕՐ ՁՐԻ!!!

Եթէ դուք 30 օրվայ ընթացքում նոր մեթօդով կազմված մեր ինքնուսոյց ձեռնարկով (միւսներին բեկված է) չէք սովորի ազատօրէն խօսել, գրել և կարդալ գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն, լատիներէն, լէհերէն, իտալերէն, ՓՈՂԸ յետ ենք ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ: Ձեռնարկի գինը մի լեզուի համար՝ վերադիր վճարով և ճանապարհածախսով-1 ր. 25 կ., 2-ինը՝ 2 ր., 3-ինը՝ 3 ր., 4-ինը՝ 3 ր. 75 կ., 5-ինը՝ 4 ր. 75 կ., 6-ինը՝ 5 ր. 50 կ.: «Ձեռնարկ պարերի համար» -90 կ.: Միակ պահեստը Ռուսաստանում՝ С.-Петербургъ, Офицерская, 50—213. Ф. Словаку. Интернаціональное Бюро иностранныхъ языковъ.
(16, 30) (П. 55246) 542. 2—1

ԱՐՇԱԿ ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ և
ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆԻ
„ԴԱՍԸՆԿԵՐ“ Բ. տարի
Տպագրվում է եւ յունիսին լոյս կը տեսնի: Մէջ ընդ մէջ կան ձեռագիր յօդուածներ արտագրութեան եւ ուղղագրական որոշ կանոնների համար:
„ԴԱՍԸՆԿԵՐ“ Ա. տարի (այբբենարան-ընթերցարան): ԿԱԶՄԱԾ 50 Կ.
Գումարով առնողներին զեղչ 20%
Պահեստը «Գուտտենբերգ» գրախանութում, Թիֆլիս:
(ու. կ.) 536. 2—2

Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութեան գրասենեակում վաճառվում են Աւ. Պօղոսեանի նուիրած հետեւեալ գրքերը.

1) Ս. Մեսրոպ, Լէօի	գինը	75 կոպ.
2) Ինքնակոչ իշխանը, Վիլհէլմ Հաուֆի	»	10 »
3) Փնջիկ, մանկ. երգ. եւրոպ. նոտան., Ա. Մանուկեանի	»	30 »
4) Պատմուածքներ կենդանիների կեանքից	»	40 »
5) Ժողովրդական պատմուածքներ, Ա. պրակ, Լ. Տօլստոյի	»	30 »
6) » » Բ. » » »	»	20 »

Հատով գնողներին 25% զեղչ, իսկ գումարով գնողներին առանձին պայման: Թիֆլիսից դուրս պահանջվող գրքերի պօստի ծախքը Ընկերութիւնն իր վրա է վերցնում: Դիմել՝ Тифлисъ, Абасъ-Абадская пл., д. соб., № 7.
(հ. կ. ե.) 531. 3—2

Թիֆլիսի Առեւտրական Դպրոցի Վերատեսուչը

յայտարարում է, որ ընդունելութեան քննութիւնները միջին և բարձր պատրաստական բաժանմունքների համար տեղի կունենան մայիսի 20-ին և 21-ին: Խնդիրները՝ վկայականների հետ միասին՝ ընդունվում են Դպրոցի գրասենեակում լի օրերը՝ ժամը 9—1-ը ցեր.: Պատրաստական ստորին բաժանմունքում ընդունվում են առանց քննութիւնների 7—9 տարեկան երեխաներ: Քննութիւնների սկիզբը առաւօտեան ժամը 8½-ին:
(շ. կ.) 541. 2—2



ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
CASCARA MIDY
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ:
Ընդունելութեան չափը. 2 ԴԵՂԱՀԱՏ ԵՐԵԿՈՆԵՐԸ, ՊԱՌԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ:
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հոգս և փորլուծութիւն: Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré, Парижъ. Ռուսաստանի գլխաւոր դեղավաճառանոցներում:
(6, 16, 26) (М. 305088) 1050. 0—23

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.